



UNHCR
The UN Refugee Agency

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ
ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ՄԱԿ ՓԳՀ մանդատի շրջանակում
փախստականի կարգավիճակի
որոշման համար



© ՄԱԿ ՓԳՀ/Շերտուքի փոփոխություն

ՀՈՒՇԱԳԻՐ ԵՎ ԲԱՌԱՐԱՆ

ՄԱԿ ՓԳՀ ՄԱՆԴԱՏԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ
ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ
ՈՐՈՇՄԱՆ [ՓԿՈ] ԳՈՐԾԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ
ԿԻՐԱՌԵԼԻ՝ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ
ԵՂԱՆԱԿՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
Շրջանակ	4
I. Գործերի քննության եղանակներ	6
i. Կանոնավոր ՓԿՈ ընթացակարգ.....	6
ii. Արագացված ՓԿՈ	7
iii. Պարզեցված ՓԿՈ	8
iv. Միասնական գրանցում - ՓԿՈ.....	8
v. Միասնական ՓԿՈ – Վերաքննություն	122
II. Հարակից հասկացություններ	15
i. Նույնականացում	15
ՓԿՈ-ով պայմանավորված ընդունելիության գնահատում	15
ՓԿՈ նպատակով գործի նույնականացում	16
ii. Առաջնահերթության սահմանում [ՓԿՈ համար]	17
iii. Առաջնահերթության վերացում [ՓԿՈ համար].....	18
iv. Բացառման խթաններ.....	18
v. Գործերի էլքերի կանխատեսման որոշակի հավանականություն ներառող հասկացություններ	19
Ակնհայտորեն անհիմն	20
Ակնհայտորեն հիմնավորված	21
Ներառման կանխավարկած.....	21
vi. Առաջին հայացքից ճանաչման (Prima Facie) մոտեցում.....	23
III. Գործերի քննությանն առնչվող տերմիններ և հասկացություններ, որոնց օգտագործումը չի խրախուսվում	24
i. Դասական ՓԿՈ	24
ii. Մասնատված ՓԿՈ – Վերաքննություն	24
iii. Կենտրոնացված ՓԿՈ	24
iv. Լիարժեք ՓԿՈ.....	24
v. Ընդլայնված գրանցում	24
Իրավասության բացակայության կանխավարկած / Հայցադիմումի առկայության բացակայություն	25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատի շրջանակում անհատական փախստականի կարգավիճակի որոշման համատեքստում (ՓԿՈ մանդատ) կիրառվող տերմինների և հասկացությունների բազմազանությունը վերջին տարիներին գործերի վարման նոր եղանակների ներմուծմանը զուգահեռ աճել է¹: Այլ տերմիններ և հասկացություններ են կիրառվել տարիներ շարունակ, սակայն դրանց գործածությունը միանման չի եղել տարբեր գործառնություններում:

Փախստականի կարգավիճակի որոշման վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ-ի ռազմավարական դիրքորոշման և ՄԱԿ ՓԳՀ մանդատի շրջանակում Փախստականի կարգավիճակի որոշման վերանայված ընթացակարգային չափորոշիչների համաձայն՝ գործառնություններ են հարկավոր, որպեսզի ՓԿՈ դերը դիտարկվի պաշտպանության և ռազմավարության ավելի լայն համատեքստում: Այն դեպքում, երբ մանդատային ՓԿՈ-ն ապահովում է պաշտպանության հարցում բարելավումների կամ անհատների համար արդյունքների հասնելու լավագույն միջոցները (որոնց ավելի արդյունավետ կամ հաջող կերպով հնարավոր չէ հասնել այլ միջոցներով), գործառնությունների միջոցով պետք է գնահատվի, թե գործի վարման որ եղանակներն են առավել նպատակահարմար: Գործերի մշակման նման եղանակները պետք է ուղղված լինեն մեծագույն թվով խնդրո առարկա անձանց համար պաշտպանության առավելագույն ազդեցություն ապահովելուն՝ որոշումների կայացման գործընթացի արդյունավետության և բարձրորակ ՓԿՈ-ի ապահովման միջոցով, որը հանգեցնում է արդար անհատական որոշումների՝ ՄԱԿ ՓԳՀ մանդատի շրջանակում փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգային չափորոշիչներում (ՓԿՈ ընթացակարգային չափորոշիչներ) սահմանված ընթացակարգային երաշխիքների համաձայն²: Հիմնական ընթացակարգային երաշխիքները ներառում են անհատական հարցազրույցի միջոցով կամ այլ կերպ լսված լինելու իրավունք³, ապաստանի տրամադրման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության, այդ թվում՝ թարգմանության իրավունքը, որը թույլ կտա դիմողի համար հասկանալի լեզվով տեղեկատվություն ստանալ և ընթացակարգին մասնակցել, իրավաբանական աջակցության և օրինական ներկայացուցչության իրավունքը, ինչպես նաև պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

ՄԱԿ ՓԳՀ մանդատի շրջանակում փախստականի կարգավիճակի որոշման [ՓԿՈ] գործերում կիրառվող հասկացությունների եվ տերմինների այս ամփոփագիր-բառարանը («Բառարան») լույս է ընծայվում է որպես ՓԿՈ ընթացակարգային չափորոշիչների հավելված, որի նպատակն է նպաստել փախստականի կարգավիճակի որոշմանն առնչվող տերմինաբանության հետևողական և միանման ընկալմանն ու կիրառմանը ՄԱԿ ՓԳՀ գործառնություններում, որտեղ ՓԿՈ է իրականացվում ՄԱԿ ՓԳՀ մանդատի շրջանակում, ինչպես նաև պարզաբանել և զգուշացնել, որպեսզի խնդրո առարկա տերմինաբանությունը պատշաճ կերպով կիրառվի ցանկացած կոնկրետ գործառնական համատեքստում:

¹ Սույն փաստաթղթի նպատակների համար գործի քննության եղանակը սահմանվում է որպես ցանկացած անհատական ընթացակարգ, որը հանգեցնում է համապատասխան անձի՝ որպես փախստական ճանաչվելու-չճանաչվելու մասին որոշմանը: Գործերի քննության եղանակները տարբերվում են՝ ելնելով նրանից, թե ինչպես է որոշվում փախստականի կարգավիճակը, այլ ոչ թե ով է դա անում (ինչպես դա տեղի է ունենում «համատեղ» կամ «զուգահեռ» կամ «պետական» ՓԿՈ ընթացակարգերում), կամ ինչու (ինչպես «մնացորդային» ՓԿՈ ընթացակարգերի դեպքում: Տես նաև ծանոթագրություն 9):

² ՄԱԿ ՓԳՀ, ՄԱԿ ՓԳՀ մանդատի շրջանակում փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգային չափանիշներ, 20 նոյեմբերի 2003թ., <http://www.refworld.org/docid/42d66dd84.html>. Նոր կամ թարմացված գլուխները հասանելի են հետևյալ հասցեով՝ <http://www.refworld.org/rsdproceduralstandards.html>:

³ Նկատի ունեցեք, որ գիտակցված կերպով այն բացարձակ պահանջը չպահպանելը, ըստ որի՝ հարցազրույցը պետք է լինի այն մեխանիզմը, որով դիմումատուին տրվում է «լսված լինելու իրավունք», ինչպես արտացոլված է ՓԿՈ ընթացակարգային չափանիշների 4.3.1 բաժնում («Դիմումատուի՝ անհատական ՓԿՈ հարցազրույց ունենալու իրավունքը»), տեղի է ունենում պարզեցված ՓԿՈ-ում, որտեղ ճանաչումը տեղի է ունենում գրավոր դիմումի հիման վրա, և այս դեպքում, երբ ՄԱԿ ՓԳՀ-ի նպատակն է ճանաչել հայցը, գրավոր դիմումը կարող է համարվել որպես լավելու իրավունք: Դիմումատուն պետք է տեղեկացվի այդ մտադրության մասին, և նրա ցանկության դեպքում առաջարկվի հարցազրույցի հնարավորություն:

Կարևոր է ոչ միայն գործերի վարման հետ կապված հատուկ տերմինների վրա հիմնված ընդհանուր պրակտիկայի առկայությունը՝ գործերի վարման ներկայումս կիրառվող եղանակները նկարագրելու համար, այլև ընդհանուր ընկալման ապահովումն առ այն, թե ինչպես կարելի է լավագույնս կիրառել գործերի վարման եղանակները: Կարևոր է նաև ընդհանուր ընկալումը և իրազեկվածությունն այն մասին, թե գործերի վարման որոշակի եղանակներ որ դեպքերում կարող են նապաստակահարմար չլինել: Հարկավոր է խնամքով մոտենալ տեղական մակարդակով մշակվում են գործերի վարման եղանակներին առնվող չափորոշիչներ և ուղղորդման համակարգեր մշակելու գործին, որպեսզի ապահովվի գործերի ուղղորդման հետևողական և պատշաճ պրակտիկա: Երբ գործառնություններում օգտագործվում են գործի վարման եղանակներ, տերմիններ և հասկացություններ, որոնք թվարկված չեն սույն Բառարանում, որոնք համապատասխանում են կամ էապես նման են այս բառարանի նկարագրություններին, ապա խրախուսվում է այդ տերմինաբանությունը համապատասխանեցնել այստեղ օգտագործված տերմիններին: Եթե գործերի վարման եղանակները, տերմինները և հասկացությունները սահմանված չեն սույն բառարանում, դրանք պետք է մեկնաբանվեն ՓԿՈ ընթացակարգային չափորոշիչներում սահմանված նշանակությամբ⁴: Ավելին, Այն դեպքերում, երբ գործերի վարման եղանակները, տերմինները և հասկացությունները սահմանված են ՄԱԿ ՓԳՀ-ի այլ ուղեցույցներով, վերջիններս շարունակում են մնալ հղման հիմնական աղբյուրը: Այս առումով ՄԱԿ ՓԳՀ-ի Միջազգային պաշտպանության վերաբերյալ ուղեցույցները շարունակում են հանդես գալ որպես այնպիսի հասկացությունների հղման հիմնական աղբյուր, ինչպիսիք են ժամանակավոր պաշտպանությունը⁵ և ի սկզբանե ճանաչումը⁶: Այս փաստաթուղթը չի անդրադառնում այն հատուկ եղանակներին, որոնք կիրառվում են պետությունների կողմից լայնածավալ վերաբնակեցման և/կամ մարդասիրական ընդունելության գործընթացի շրջանակում, մասնավորապես՝ Սիրիայի ճգնաժամի համատեքստում, ինչպես օրինակ՝ Նույնականացման վրա հիմնված մեթոդաբանությանը (ՆՀՄ) և Մարդասիրական ընդունելության ծրագրին (ՄԸԾ), քանի որ այս մեթոդաբանությունները ոչ միշտ են ենթադրում/պարունակում փախստականի կարգավիճակի որոշման տարր:

Շրջանակ

Ընդունելով, որ ապաստանի պետական համակարգերը բախվում են այնպիսի մարտահրավերների, ինչին բախվում են ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատի շրջանակում իրականացվող ՓԿՈ գործողությունները, այս բառարանն անդրադառնում է ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից միջազգային պաշտպանության դիմումների քննությանը: Այս բառարանը չի անդրադառնում ապաստանի տրամադրման կամ ՓԿՈ պետական ընթացակարգերին, ՄԱԿ ՓԳՀ-ի մասնակցությանը պետական ընթացակարգերին կամ այն իրավիճակներին, երբ ՄԱԿ ՓԳՀ-ն իրականացնում է ընթացակարգ, որպեսզի պետության անունից իրավական ուժ հաղորդի ի սկզբանե ճանաչման մասին հայտարարությանը⁷:

Հարկ է նաև նշել, որ կան մի շարք տերմիններ, որոնք ներառված չեն սույն Բառարանում, քանի որ դրանք մասնավորապես չեն վերաբերում գործերի վարման եղանակներին կամ հարակից հասկացություններին նեղ իմաստով (ինչպես սահմանված է Ծանոթագրություն 1-ում): Դրանք թվում

⁴ ՄԱԿ ՓԳՀ, ՄԱԿ ՓԳՀ մանդատի շրջանակում փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգային չափանիշներ, 20 նոյեմբերի 2003թ., <http://www.refworld.org/docid/42d66dd84.html>. Նոր կամ թարմացված գլուխները հասանելի են հետևյալ հասցեով՝ <http://www.refworld.org/rsdproceduralstandards.html>.

⁵ ՄԱԿ ՓԳՀ, *Ուղեցույց ժամանակավոր պաշտպանության կամ կացության պայմանավորվածությունների վերաբերյալ*, 2014թ. փետրվար, <http://www.refworld.org/docid/52fba2404.html>.

⁶ ՄԱԿ ՓԳՀ, *Միջազգային պաշտպանության վերաբերյալ թիվ 11 ուղեցույց. փախստականի կարգավիճակի առաջին հայացքից ճանաչում*, 24 հունիսի 2015թ., HCR/ GIP/15/11, <http://www.refworld.org/docid/555c335a4.html>.

⁷ ՄԱԿ ՓԳՀ-ի՝ ազգային ապաստանի կամ ՓԿՈ հաստատություններին ուղղված խորհրդատվական գործառնություններում խրախուսվում է հնարավորության դեպքում ընդունել տերմիններ, որոնք օգտագործվում են սույն Բառարանում՝ նման հաստատություններին տրամադրվող խորհրդատվության շրջանակում գործի քննության տերմինների համընդհանուր ընկալմանը նպաստելու նպատակով:

են այնպիսի տերմիններ, ինչպիսիք են «համատեղ», «գուգահեռ» և «մնացորդային ՓԿՈ»⁸:

Այս բառարանը պարունակում է տերմինների երկու խումբ, որոնք խմբավորված են՝ ըստ օգտագործման հաճախականության.

- ▶ տերմիններ, որոնք նկարագրում են գործերի վարման եղանակները, և
- ▶ և առնչվող հասկացություններ (ինքնին՝ նեղ իմաստով ոչ գործերի վարման եղանակներ, սակայն նշանակություն ունեն գործի վարման կոնկրետ եղանակի ընտրության համար):

Այս բառարանում ներառված տերմինների երրորդ խումբը այն տերմիններն են, որոնք օգտագործվել են նախկինում (կամ կարող են դեռ օգտագործվել ներկայումս), բայց որոնց օգտագործումը չի խրախուսվում:

Սույն բառարանը պետք է ընթերցվի ՓԿՈ-ի ընթացակարգային չափորոշիչների և դրանց վերանայումների հետ միասին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

- ▶ Սույն բառարանում թվարկված գործերի վարման բոլոր եղանակները արտացոլում են ՓԿՈ գործընթաց՝ փախստականի կարգավիճակ ստանալու իրավասության էական որոշմամբ, որի նկատմամբ կիրառվում են ՓԿՈ ընթացակարգային չափորոշիչները:
- ▶ Յուրաքանչյուր ՓԿՈ գործընթաց, անկախ գործի վարման կիրառվող եղանակից, պետք է իրականացվի ազնվությամբ՝ որակի և արդարության, ինչպես նաև արդյունավետության չափանիշներին համապատասխան:
- ▶ Գործերի վարման եղանակները պետք է գործածվեն բավարար ճկունությամբ և հարմարեցվեն գործերի ծանրաբեռնվածությանը, նկարագրին կամ գործառնական համատեքստի փոփոխություններին, ինչպես նաև «ներքին» ճկունությամբ, որպեսզի առանձին գործերը, որոնք համարվում են ոչ հարմար որոշակի եղանակի համար, կարողանան պատշաճ կերպով նույնականացվել և ներառվել կանոնավոր ՓԿՈ գործընթացում (կամ գործերի մշակման այլ՝ ավելի համապատասխան եղանակի շրջանակում):

⁸ ՄԱԿ ՓԳՀ-ի վիճակագրական հաշվետվություններում որոշումների մասին զեկուցվում է՝ ելնելով այն հանգամանքից, թե դրանք

I. ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ

i. Կանոնավոր ՓԿՈ ընթացակարգ⁹

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ: Կանոնավոր ՓԿՈ-ն վերաբերում է ՓԿՈ ընթացակարգին, որի շրջանակում դիմողի հայցը անհատական հիմունքներով համապարփակ քննության է ենթարկվում հատուկ պատրաստված Իրավասության մասնագետի կողմից՝ ՄԱԿ ՓԳՀ ՓԿՈ ընթացակարգային չափորոշիչներին համապատասխան: Այս իմաստով դա ՓԿՈ է, որն իրականացվում է առանց որևէ տեսակի պարզեցման (տես [Պարզեցված ՓԿՈ](#)), արագացման (տես [Արագացված ՓԿՈ](#)) կամ ընթացակարգային քայլերի միացման (տես [Միասնական գրանցում - ՓԿՈ](#), և [Միասնական ՓԿՈ - Վերաբնակեցում](#))՝ օգտագործելով ՄԱԿ ՓԳՀ ՓԿՈ ընթացակարգային չափորոշիչներին կցված ՓԿՈ գնահատման ձևը:

ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ: Գործերի վարման ռազմավարական մոտեցումը պահանջում է, որ ՄԱԿ ՓԳՀ գործառնություններում հաշվի առնվի գործի վարման այնպիսի այնպիսի եղանակների իրականացումը, որոնք համապատասխանեցված են գործառնության կարիքներին և ապահովում են ՓԿՈ արդյունավետությունն ու որակը: Կանոնավոր ՓԿՈ-ն հղման կետն է, որի հիման վրա պետք է գնահատվի, թե գործի մշակման որ եղանակը պետք է կիրառել: Հաշվի առնելով կանոնավոր ՓԿՈ-ի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները՝ գործի վարման ցանկացած տարբերակված եղանակի կիրառության նպատակահարմարության գնահատումը կարևոր քայլ է յուրաքանչյուր գործողության համար:

Նույնիսկ եթե գործի վարման այլ եղանակներ են կիրառվում, կանոնավոր ՓԿՈ պետք է իրականացվի բոլոր զգայուն գործերում կամ այն գործերում, որոնք դեպքում առաջանում են իրավասության հետ կապված բարդ նկատառումներ, վստահեցիկության հետ կապված խնդիրներ կամ բացառման հետ կապված մտահոգություններ, կամ որոնց դեպքում վերաբնակեցման պետությունները պահանջում են կանոնավոր ՓԿՈ՝ որպես վերաբնակեցման նախադրյալ: Մեծ մասամբ կանոնավոր ՓԿՈ իրականացվում է այն անձանց համար, որոնց՝ փախստականի կարգավիճակ ստանալու իրավասությունը չի կարող համարժեքորեն որոշվել պարզեցված, արագացված կամ միասնական ընթացակարգերով:

Գործերը կարող են հենց սկզբից քննվել կանոնավոր ՓԿՈ ընթացակարգերով կամ կարող են ստացվել գործերի վարման այլ եղանակներից, եթե առանձին գործով հաստատվում է, որ գործով առաջ եկած հարցերը չեն կարող ճիշտ կերպով լուծվել գործի վարման տվյալ կիրառվող եղանակով:

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՅՈՒՄ: ՄԱԿ ՓԳՀ գրասենյակները պետք է գնահատեն իրենց ընթացիկ գործերի ծանրաբեռնվածությունը և պարզեն, թե գործերի վարման որ եղանակները լավագույնս հարմար կլինեն ինչպես գործերի վարման արդյունավետության, այնպես էլ բարձր որակի և արդար որոշումների կայացման համար: Նման գնահատումներում հարկավոր է ներգրավել տարածաշրջանային ՓԿՈ մասնագետներին, և կարելի է խորհրդակցել ՓԿՈ բաժնի հետ: Իրավասության հարցերով բոլոր մասնագետները պետք է վերապատրաստվեն, որպեսզի կարողանան իրականացնել կանոնավոր ՓԿՈ, քանի որ դա ՓԿՈ այն ձևն է, որից բխում են գործերի վարման մյուս մեթոդաբանությունները:

ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ: Կանոնավոր ՓԿՈ-ի իրականացման համար որևէ տեսակի լիազորում

⁹ «Կանոնավոր ՓԿՈ» տերմինը ավելի նախընտրելի է, քան «դասական» կամ «լիարժեք» ՓԿՈ տերմինը:

ii. Արագացված ՓԿՈ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ: Արագացված ՓԿՈ-ն վերաբերում է ՓԿՈ ընթացակարգին, որը ներառում է փախստականի կարգավիճակի հայցի բովանդակային և անհատական քննություն/գնահատում, որի դեպքում, սակայն, ՓԿՈ գործընթացի բոլոր կամ որոշ բաղադրիչներում կիրառվում են արագացված ժամկետներ: Սա կարող է նշանակել, որ գրանցումից մինչև ՓԿՈ-ի համար դիմողի հարցազրույցի անցկացումն ընկած ժամկետը կրճատվում է, կամ կրճատվում է հարցազրույցի անցկացման և որոշման կայացման միջև ընկած ժամանակահատվածը (կամ վերը նշվածի համակցությունը): Արագացում կարող է տեղի ունենալ նաև բողոքարկման փուլում՝ բողոքի ներկայացման կամ բողոքի քննարկման ժամկետների կրճատման միջոցով:

Արագացված ՓԿՈ ընթացակարգերը կարող են զուգակցվել [Պարզեցված ՓԿՈ](#) ընթացակարգերի հետ: Ինչևէ, արագացված ՓԿՈ ընթացակարգն ինքնին չի ենթադրում բովանդակային որոշման կամ ՓԿՈ ընթացակարգի որևէ հայեցակերպի պարզեցում կամ ընթացակարգային արդարության երաշխիքների նվազեցում: Արագացված ՓԿՈ-ն ինքնին չի ներառում ՓԿՈ միացում անհատական գործի քննության այլ հնարավոր քայլերի հետ (լինի դա գրանցում, թե վերաբնակեցում): Արագացված ՓԿՈ-ն նույն բանը չէ, ինչ [Առաջնահերթության սահմանումը](#), չնայած առաջնահերթություն ստացած գործերում կարող են կիրառվել գործի արագացված քննության ժամկետներ:

ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ: Արագացված ՓԿՈ ընթացակարգեր կիրառվում են երեք հիմնական իրավիճակներում՝

1. Հատուկ կարիքներ ունեցող կամ պաշտպանական միջամտության ակնհայտ կարիք ունեցող անձանց համար (օրինակ՝ ֆիզիկական/իրավական պաշտպանության բացահայտված կարիքներ ունեցող դիմողները, այդ թվում՝ անձինք, որոնք կարող են ենթարկվել հյուրընկալող երկրում անհապաղ վերադարձման կամ կամայական ձեռքալրկման կամ կալանավորման վտանգի),¹⁰
2. Երբ կան ցուցումներ այն մասին, որ հայցը [Ակնհայտորեն հիմնավորված է](#) (հաճախ [Պարզեցված ՓԿՈ](#)-ի հետ միասին) և/կամ կիրառվում է [Ներառման կանխավարկած](#), կամ
3. Երբ կան ցուցումներ այն մասին, որ հայցը [Ակնհայտորեն անհիմն է](#) (հնարավոր է [Պարզեցված ՓԿՈ](#)-ի հետ միասին):

Այն դեպքերում, երբ ակնհայտորեն առկա է պաշտպանական միջամտության կարիք, կամ կան ցուցումներ այն մասին, որ դրանք [ակնհայտորեն հիմնավորված են](#), արագացված ՓԿՈ ընթացակարգերի կիրառումը (հատկապես [պարզեցված ՓԿՈ](#) ընթացակարգերի հետ միասին) կարող է հանգեցնել փախստականի կարգավիճակի ավելի արագ ճանաչմանը և հարակից իրավունքների/պաշտպանության նպաստների ավելի արագ հասանելիությանը: Նույն կերպ կարող են լինել դեպքեր, երբ գործերի քննության ժամկետները արագացվում կամ կրճատվում են այլ պատճառներով, օրինակ՝ երբ փախստականի կարգավիճակի ճանաչում է պահանջվում կալանքից ազատվելու կամ վերադարձը կանխելու համար: Այն դեպքերում, երբ հայցի որոշման գործընթացում ակնհայտ է դառնում, որ այն ներառում է բարդ փաստական կամ իրավական խնդիրներ, այդ թվում՝ բացառման հետ կապված մտահոգություններ, որոնք չեն կարող լուծվել կարճ ժամկետում, գործը կարող է քննվել [կանոնավոր ՓԿՈ](#) ընթացակարգով: Պատշաճ կիրառության դեպքում արագացված ՓԿՈ կարող է իրականացվել այն հայցերով, որոնց դեպքում առկա են ցուցումներ այն մասին, որ դրանք [Ակնհայտորեն անհիմն են](#), և այս առումով կարող է նպաստել ընթացակարգերի ընկալվող արժանահավատությանն ու արդարությանը և օժանդակել ներկա և ապագա դիմումատուների

¹⁰ Տես Բաժին 4.6.3, ՄԱԿ ՓԳՅ, ՄԱԿ ՓԳՅ մանդատի շրջանակում փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգային չափանիշներ, 20 նոյեմբերի 2003թ., <http://www.refworld.org/docid/42d66dd84.html>. Նոր կամ թարմացված գլուխները հասանելի են հետևյալ հղումով՝ <http://www.refworld.org/rstdproceduralstandards.html>.

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ: Ինչպես բոլոր դեպքերում, այնպես էլ չափորոշիչներ և համակարգեր մշակելիս պետք է ուշադրություն դարձնել արագացված ՓԿՈ ընթացակարգերի ուղղորդումներին՝ ապահովելու դեպքերի ուղղորդման հետևողական և համապատասխան պրակտիկան: Այս նախագգուշացումը հատկապես առաջանում է այն գործողությունների դեպքում, որոնք ունենում են ընթացակարգային ուշացումներ, որտեղ դիմորդները միջազգային պաշտպանության համար կարող են ենթարկվել ներկայացուցչության պակասի, դիմել խեղաթյուրումների և/կամ խարդախության, կամ դիմորդները կարող են դիտավորյալ իրենց վտանգի տակ դնել՝ կարիքների վրա հիմնված հատուկ չափանիշներին համապատասխանելու համար՝ փորձելով ապահովել, որ իրենց պահանջը լուծվի ավելի արագ: Առանձնահատուկ նախագգուշացում պետք է իրականացվի այնտեղ, որտեղ այն հայտերը, որոնք, ամենայն հավանականությամբ, ակնհայտորեն անհիմն են, ընթացք են ստանում արագացված ՓԿՈ-ով և պարզեցված ՓԿՈ-ով՝ ապահովելու համար, որ հիմնական ընթացակարգային երաշխիքները համապատասխանեն ՓԿՈ-ի ընթացակարգային ստանդարտներին:

Ժամկետները չպետք է կրճատվեն ողջամիտ ժամկետից այն կողմ, որպեսզի չխաթարվի գործընթացի արդարությունը և դիմորդները ու նրանց օրինական ներկայացուցիչները պետք է տեղեկացված լինեն կիրառելի ժամկետների մասին ժամանակին և հստակ ձևով:

ԼԻԱԶՈՐՈՒՄ: Արագացված ՓԿՈ-ն չի պահանջում պարզաբանման որևէ գործողություն, մինչև մեկնարկը: Պարզեցված ՓԿՈ-ն հեշտացնելու համար օգտագործվող ձևերը կամ ձևանմուշները պետք է տրամադրվեն Տարածաշրջանային բյուրոյի՝ ՓԿՈ համար պատասխանատու նշանակված աշխատակցին և ՄՊԲ-ին (ՓԿՈ և/կամ Պրոգրեսիվ կարիքների, ուժերի և լուծումների շրջանակ)՝ համապատասխան ՍԳԸ-ների հետ միասին:

III. Պարզեցված ՓԿՈ¹²

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ: Պարզեցված ՓԿՈ-ն վերաբերում է ՓԿՈ ընթացակարգին, որտեղ կամ հարցազրույցը, գնահատման կազմումը կամ երկուսն էլ պարզեցված են կանոնավորի համեմատ: Պարզեցման ուղիները, ի թիվս այլոց, կարող է ներառել, ՓԿՈ-ի գնահատման ձևերի մշակումը նախապես բնակեցված իրավական վերլուծություն և/կամ նախապես բնակեցված ծագման երկրի մասին տեղեկատվություն կամ միայն հարցազրույցների միջոցով՝ կենտրոնանալով պահանջի հիմնական հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են՝ ծագման տարածքը, էթնիկ պատկանելությունը կամ կրոնը: Նկատի ունենալով ուղիների այս օրինակները, որոնցով կանոնավոր ՓԿՈ-ն կարող է հեշտացվել, պարզեցված ՓԿՈ-ն ըստ էության գործընթաց է, որի միջոցով սովորական ՓԿՈ-ների մի քանի ասպեկտներ պարզեցված են՝ գործի մշակման ժամանակի առումով արդյունավետության բարձրացում ստանալու նպատակով: Պարզեցված ՓԿՈ-ն մնում է լիովին անհատական ՓԿՈ ընթացակարգ, որը ներառում է հայցի էության անհատական քննությունը և դիմումատուներին տալիս է բոլոր ընթացակարգային երաշխիքները՝ համաձայն ՓԿՈ-ի Ընթացակարգային երաշխիքների (ինչպես արտացոլված է բառարանի ներածության մեջ, որտեղ և գրավոր դիմումի հիմքով ՄԱԿ ՓԳՀ-ի գործողությունն է ճանաչել հայցը, գրավոր դիմումը կարող է համարվել որպես դիմողի «լաված լինելու իրավունք») ընթացակարգային չափանիշ և հարցազրույցը կարող է հետաձգվել: Դիմորդը պետք է տեղեկացվի այս մտադրության մասին և ցանկության դեպքում

¹¹ ՄԱԿ ՓԳՀ Ընթացակարգային չափանիշների բաժին 4.6.4-ը ներկայումս չի նախատեսում ակնհայտորեն անհիմն թվացող հայցերի փոխանցում արագացված ՓԿՈ ընթացակարգերին: Սույն բառարանը փոխարինում է ՄԱԿ ՓԳՀ-ի ընթացակարգային չափանիշների դրույթները, քանի դեռ Բաժին 4-ը չի թարմացվել: ՄԱԿ ՓԳՀ մանդատի շրջանակում փախստականի կարգավիճակի որոշման (ՓԿՈ) գործերի նկատմամբ կիրառելի՝ գործերի քննության եղանակների, հասկացությունների և տերմինների հուշագիր և բառարան:

¹² <<Պարզեցված ՓԿՈ>> տերմինն առավել նախընտրելի է, քան <<Կենտրոնացված ՓԿՈ>>-ն:

ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ: Պարզեցված ՓԿՈ կարող է կիրառվել ՓԿՈ արդյունավետությունը բարձրացնելու նպատակով և առավել հաճախ կիրառվում է այն գործերի/դիմումատուների դեպքում,

- ▶ որոնց դեպքում կիրառվում է [Prima Facie առկայության ճանաչման մոտեցումը](#),
- ▶ ճանաչման բարձր ցուցանիշներ ունեցող (օրինակ՝ գործեր/պրոֆիլներ, որոնց դեպքում կարող է կիրառվել [ներառման կանխավարկածը](#)) դեպքերում և նմանատիպ հայցերի բարձր տարածվածության դեպքում, որը թույլ է տալիս կենտրոնացված հարցազրույցներ իրականացնել և/կամ օգտագործել նախապես լրացված իրավական վերլուծությամբ և/կամ ԾԵՏ-ով ձևանմուշներ,
- ▶ ճանաչման շատ ցածր ցուցանիշներ և հայցերի մեծ նմանության դեպքում, ինչը թույլ է տալիս անցկացնել կենտրոնացված հարցազրույցներ և/կամ օգտագործել նախապես լրացված իրավական վերլուծություններով և/կամ ԾԵՏ-ով ձևանմուշներ:

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ: Պարզեցված ՓԿՈ ընթացակարգերի ընդունումը կախված է որոշակի գործերի խմբի/պրոֆիլի մասին բարձր իրազեկվածությունից և, հետևաբար, կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ գործառնության մեջ ներգրավված են փորձառու որոշում կայացնողներ, որոնք ծանոթ են կոնկրետ գործերի խմբին, և երբ գործում են համապատասխան վերահսկողական մեխանիզմներ: Ավելին, պարզեցված ՓԿՈ ընթացակարգեր չպետք է կիրառվեն այն գործերի դեպքում, որոնք չունեն միատարրության բարձր աստիճան: Նախքան պարզեցված ՓԿՈ ընթացակարգերի իրականացումը, անհրաժեշտ է լինելու իրականացնել գործողություններ՝ ուղղված կենտրոնացված հարցազրույցի վերաբերյալ ուղեցույցների մշակմանը՝ խնդրո առարկա գործերի խմբի կամ պրոֆիլի մասով, և/կամ գործերի խմբի/ պրոֆիլի հատուկ ձևանմուշների մշակմանը՝ ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից տրված՝ երկրին առնչվող ուղղորդման համաձայն, երբ նման ուղղորդում առկա է, որի համար պահանջվում է կանոնավոր թարմացում: Պարզեցված ՓԿՈ ընթացակարգերում վերանայման մեխանիզմները պետք է համապատասխանեն ՓԿՈ ընթացակարգային չափորոշիչներին, մասնավորապես՝ ապահովելու համար, որ պարզեցված ՓԿՈ ընթացակարգերի ընդունումը չազդի որոշումների կայացման որակի և արդարության վրա: Դիմումատուները, որոնց հայցերը առաջացնում են վստահելիության հետ կապված մտահոգություններ և/կամ [հացառման խթաններ](#), կամ այլ կերպ համարվում են բարդ (կամ որոնց հայցերը պարունակում են տարբեր, որոնցից պարզ է դառնում, որ հայցը չի տեղավորվում միատարր գործերի շրջանակում, որոնց նկատմամբ կիրառելի են պարզեցված ընթացակարգերը), պետք է քննվեն [Կանոնավոր ՓԿՈ](#) ընթացակարգերով:

ԼԻԱԶՈՐՈՒՄ: Նոր գործերի կամ պրոֆիլների դեպքում պարզեցված ՓԿՈ ընթացակարգերի իրականացման վերաբերյալ որոշման համար, առաջին հերթին, պահանջվում է խորհրդակցություն Տարածաշրջանային բյուրոյում (ներում) ՓԿՈ համար պատասխանատու նշանակված աշխատակցի հետ: Պարզեցված ՓԿՈ-ն հեշտացնելու համար օգտագործվող ձևերը կամ ձևանմուշները պետք է տրամադրվեն Տարածաշրջանային բյուրոյի՝ ՓԿՈ համար պատասխանատու նշանակված աշխատակցին և ՄՊԲ-ին (ՓԿՈ և/կամ Պրոգրեսիվ կարիքների, ուժերի և լուծումների շրջանակ)՝ համապատասխան ՍԳԸ-ների հետ միասին:

iv. Միասնական գրանցում – ՓԿՈ¹³

¹³ Այս տերմինը պետք է տարբերել «Անհատական ընդլայնված գրանցում» տերմինից, որը կապահովվի Միասնական առաքելության ռեսուրսների համակարգի (IMRS) կողմից Գրանցման ձեռնարկի առաջիկա վերանայման մեջ և/կամ հարակից փաստաթղթերում հետևյալ կերպ՝ հատուկ պաշտպանության գործերի կառավարման և/կամ պլանավորման միջամտությունների հեշտացման նպատակներ, որոնք չեն հանգեցնում փախստականի կարգավիճակի անհատական

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ Միասնական գրանցում – ՓԿՈ-ն վերաբերում է ՓԿՈ ընթացակարգին, որի նպատակն է մեկ հարցազրույցի ընթացքում պարզել՝

(1) կենսաբանական տվյալներ և այլ տեղեկատվություն, որը սովորաբար հավաքագրվում է գրանցման հարցազրույցի ժամանակ (այդ թվում, օրինակ, դիմումատուի՝ իր երկրից հեռանալու պատճառներին առնչվող հիմնական տեղեկություններ), ինչպես նաև (2) փախստականի կարգավիճակի ճանաչման նպատակով դիմումատուի՝ միջազգային պաշտպանության համար իրավասությանն առնչվող տեղեկություններ, որոնք գրանցման ժամանակ հավաքագրված սովորական տվյալների բազայում ներառված չեն: Այս հարցազրույցը¹⁴ տեղի է ունենում սովորաբար գրանցման փուլում¹⁵: Գործընթացի գրանցման և ՓԿՈ քայլերը արդյունավետ կերպով համատեղվում են, քանի որ (փոքր-ինչ ընդլայնված) գրանցման հարցազրույցը հիմք է ծառայում ՓԿՈ որոշման համար: Սովորաբար միասնական գրանցման – ՓԿՈ ընթացակարգերի նպատակն է գրանցել **լրացուցիչ մանրամասներ, որոնք գրանցման ժամանակ հավաքագրվող սովորական տվյալների բազայից դուրս են** և վերաբերում են (i) իրավասությանն առնչվող խնդիրներին, օրինակ՝ ծագման վայրին կամ քաղաքացիությանը, փախուստի պատճառներին, հնարավոր բացառման նկատառումների համար նշանակություն ունեցող տարրերին (օրինակ՝ զինվորական ծառայություն, դաս/աստիճան, որոշակի քաղաքական կուսակցություններին կամ խմբավորումներին հարելը, կառավարությունում զբաղեցրած դիրքը, քրեական անցյալի մասին վկայող որևէ նշաններ և այլն), և/կամ (ii) խոցելիություններին կամ հատուկ կարիքներին¹⁶

ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ: Միասնական գրանցում – ՓԿՈ-ն հիմնականում կիրառվում է՝

► այն գործերով, որոնց դեպքում կիրառելի է առերևույթ ճանաչման *Prima Facie* մոտեցումը: Միասնական գրանցում-ՓԿՈ ընթացակարգերը ծառայում են հաստատելու, որ անհատը մտնում է **առաջին հայացքից ճանաչման մոտեցման շրջանակի մեջ**:

► այն գործերով, որոնց դեպքում կիրառվում է **Ներառման կանխենթադրույթը**, սակայն իրավասության նկատառումներից ելնելով՝ իրատեսական է և/կամ խորհուրդ է տրվում կիրառել տրամադրված տեղեկատվության ստուգման այնպիսի եղանակ, որը ավելի խիստ է, քան գրանցման փուլում տեղի ունեցող սովորական ստուգումը, հատկապես՝ ծագման վայրի, էթնիկ պատկանելության, կրոնի և **Ներառման կանխենթադրույթի** համար նշանակություն ունեցող այլ տարրերի մասով և/կամ այն տարրերի մասով, որոնք կարող են հավասարազոր լինել **Բացառման խթաններին**:

Միասնական գրանցման-ՓԿՈ ընթացակարգերի, այդ թվում՝ հատկապես միասնական հարցազրույցի ընթացքում հավաքագրված և գրանցված տեղեկատվությունը հիմնականում օգտագործվում է անհատական գործընթացում անձանց որպես փախստական ճանաչելու համար, նույնիսկ եթե այդ անհատական գործընթացն իրականացվում է առերևույթ *prima facie* հայտարարության շրջանակում խմբային ճանաչման համատեքստում: Անհատական տարրը համեմատաբար ավելի թեթև է՝ գործերի վարման այլ եղանակների համեմատությամբ: Տեղեկատվությունը նաև օգտագործվում է արժանահավատության խնդիրներ և/կամ հնարավոր բացառման մտահոգություններ պարունակող գործերի նույնականացման համար՝ դրանք ավելի խորը քննության ենթարկելու համար **Կանոնավոր ՓԿՈ-ի** փոխանցելու նպատակով: Կախված համատեքստից՝ գործառնության շրջանակում նման գործերը կարող են նշվել որպես «ընթացքում գտնվող» հնարավոր ապագա վերանայման կամ

ճանաչմանը: Անհատական ուժեղացված գրանցումը կարող է ներառել լրացուցիչ հարցեր, որոնք առնչվում են ՓԿՈ քննությանը, կայուն լուծումներին կամ պաշտպանության միջամտությանը, կամ լրացուցիչ հարցեր՝ նպատակային օգնության պլանավորման իրավասությունը որոշելու համար:

¹⁴ Բացառիկ դեպքերում կարող է պահանջվել կարճ լրացուցիչ հանրագրույց:

¹⁵ Միասնական գրանցում – ՓԿՈ-ն նախկինում կոչվել է «Ուժեղացված գրանցում»: Այս տերմինն այլևս չի գործածվում: Այն գործընթացի նպատակը, որը այժմ կոչվում է «Անհատական ուժեղացված գրանցում», ավելի լայն է, քան միասնական գրանցման – ՓԿՈ քննության նպատակը այն միաստով, որ այն չի ներառում ՓԿՈ որոշում:

¹⁶ Չնայած վերը նշվածները ամենատարածված տեսակներն են, սկզբունքորեն լրացուցիչ տեղեկատվություն կարող է հավաքագրվել պաշտպանությանը կամ ծրագրին առնչվող ցանկացած նպատակով (որը չի սահմանափակվում ՓԿՈ-ով):

ՄԱԿ ՓԳՀ մանդատի շրջանակում փախստականի կարգավիճակի որոշման (ՓԿՈ) գործերի նկատմամբ կիրառելի՝ գործերի քննության եղանակների, հասկացությունների և տերմինների հուշագիր և բառարան

Առաջնահերթության վերացման նպատակով: Միասնական գրանցում-ՓԿՈ-ն կարող է նաև օգտագործվել՝ պաշտպանական միջամտության այլ ձևերին փոխանցումը հեշտացնելու համար, երբ նման գործողության կարիք է առաջանում Միասնական գրանցման-ՓԿՈ հարցազրույցի ընթացքում:

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ: Կանոնավոր ՓԿՈ-ի համեմատությամբ՝ Միասնական գրանցում-ՓԿՈ ընթացակարգերը կրճատում են դիմումատուի հետ անհատական հարցազրույցների քանակը և, հետևաբար, դիմումատուի հայցի քննության վրա ծախսվող ժամանակը: Սա իր հերթին կարող է կրճատել ՄԱԿ ՓԳՀ-ի՝ արժանահավատության հարցերը կամ բացառման մտահոգությունները կամ խաբեությունները և/կամ դիմումատուի հայցի բոլոր կողմերը նկատելու և քննելու կարողությունը:

Միասնական գրանցում – ՓԿՈ ընթացակարգեր չպետք է կիրառվեն, եթե չկա ուժեղ

Ներառման կանխենթադրույթ: Ավելին, Միասնական գրանցում-ՓԿՈ ընթացակարգերը պետք է լինեն քաղաքացիությանը/գործի տեսակին/պրոֆիլին հատուկ:

Հարցազրույց վարող և առանձին դեպքերում հանձնարարականներ մշակող՝ գործեր քննող աշխատակիցները պետք է համապատասխան փորձառություն ունենան ՓԿՈ ոլորտում, քանի որ Միասնական գրանցում – ՓԿՈ ընթացակարգերը կարող են հանգեցնել փախստականի կարգավիճակի ճանաչմանը: Դիտարկելիս, թե արդյոք գրանցմամբ զբաղվող անձնակազմը կարող է միասնական գրանցման – ՓԿՈ հարցազրույցներ վարել, պետք է հաշվի առնել անձի գիտելիքներն ու փորձը տվյալ տեսակի գործերի վարման ոլորտում, ՓԿՈ հարցերով վերապատրաստումը և հարցազրույց վարելու հմտությունները: Գրանցում իրականացնող անձնակազմը պետք է առնվազն տարրական վերապատրաստում անցած լինի ՓԿՈ վերաբերյալ և պետք է ունենա հարցազրույցների վարման տարրական հմտություններ: Գործառնություններում պետք է ներդրվեն վերահսկողության ուժեղ մեխանիզմներ, այդ թվում՝ անսպասելի/տեղում իրականացվող ստուգումներ և հարցազրույցների լսում: Միասնական գրանցում – ՓԿՈ հարցազրույցից հետո կայացվող որոշումները պետք է ստուգվեն/համաստորագրվեն ՓԿՈ անձնակազմի կողմից (կամ ՓԿՈ անձնակազմի բացակայության դեպքում, ինչպես կարող է պատահել առերևույթ ճանաչման *prima facie* իրավիճակներում, գրացմամբ զվաղվող ավագ անձնակազմի կողմից, որոնք նախընտրելի է, որ ՓԿՈ ոլորտում վերապատրաստում անցած լինեն): Դիմումը մերժելու վերաբերյալ որոշումներ չպետք է կայացվեն միասնական գրանցման – ՓԿՈ ընթացակարգում. գործերը, որոնցով ճիշտ էլքը, ըստ երևույթին, մերժումն է (կամ որոնց դեպքում բացառման խթաններ են հայտնաբերվել), որպես կանոն պետք է քննվեն այլ ավելի պատշաճ գործի վարման եղանակներով (ինչպես օրինակ՝ Պարզեցված ՓԿՈ, կամ Կանոնավոր ՓԿՈ):

ԼԻԱԶՈՐՈՒՄ: Նոր գործով կամ բնութագրի դեպքում Միասնական գրանցման-ՓԿՈ ընթացակարգեր իրականացնելու մասին որոշման համար (Պետության անունից Պետության կողմից առերևույթ ճանաչման համատեքստից դուրս, որպիսի սցենարին այս Բառարանը չի անդրադառնում) պահանջվում է առաջին հերթին խորհրդակցել նշանակված ՓԿՈ պատասխանատուի կամ Տարածաշրջանային բյուրոյի՝ գրանցման համար նշանակված պատասխանատու(ներ)ի հետ: Նախքան Միասնական գրանցման – ՓԿՈ ընթացակարգերի իրականացումը, անհրաժեշտ է խորհրդակցել ՄՊԲ (ՓԿՈ բաժնի և Պրոգրեսիվ կարիքների, ուժերի և լուծումների շրջանակ)–ի համապատասխան ԳՇ մարմինների և Միասնական առաքելության ռեսուրսների համակարգի¹⁷ հետ: Միասնական գրանցման – ՓԿՈ ընթացակարգերի Իրականացման վերաբերյալ վերջնական որոշում կարող է կայացվել միայն հիմնական նկատառումների մանրակրկիտ վերլուծությունից հետո (ինչպես վերը նշված է «Զգուշացումներ» բաժնում)՝ ապահովելով ռեսուրսների համապատասխան բաշխում: Միասնական գրանցման – ՓԿՈ ընթացակարգերի ՍԳԸ-ները պետք է վերանայվեն տարածաշրջանային բյուրո(ներ)ի նշանակված պատասխանատու(ներ)ի կողմից և տրամադրվեն ՄՊԲ-ին (ՓԿՈ և/կամ Պրոգրեսիվ կարիքների, ուժերի և լուծումների շրջանակ):

¹⁷ Տվյալների փոխակերպման ռազմավարության համաձայն (2020-2025թթ.)՝ կստեղծվի տվյալների փոխակերպման նոր ծառայություն: Ծառայության նոր պաշտոնական անվանումը և ծառայության կառուցվածքը, ներառյալ Միասնական առաքելության ռեսուրսների համակարգի նոր անվանումը, դեռևս որոշված չէ և պաշտոնապես կգործարկվի 2020 թվականի ընթացքում:

v. Միասնական ՓԿՈ – Վերաբնակեցում

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ: Միասնական ՓԿՈ – Վերաբնակեցման ընթացակարգերը¹⁸ գործերի վարման եղանակ են, որի ժամանակ ՓԿՈ և վերաբնակեցման գործընթացները միաձուլված են հիմնականում միայն մեկ համատեղ գործընթացի իրականացման միջոցով, որի դեպքում ՓԿՈ և վերաբնակեցման հարցազրույցի արդյունքում լրացվում է միայն մեկ Վերաբնակեցման գրանցման ձև (ՎԳՁ) երկու՝ ՓԿՈ Գնահատման ձևի և ՎԳՁ-ի փոխարեն: Միասնական ՓԿՈ – վերաբնակեցման ընթացակարգերի շնորհիվ վերանում է ՓԿՈ գնահատման առանձին ձև լրացնելու անհրաժեշտությունը, սակայն դրանք ներառում են ՄԱԿ ՓԳՀ կողմից փախստականի կարգավիճակի պաշտոնական ճանաչում այն դեպքերում, որոնք ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից ուղղորդվել են վերաբնակեցման¹⁹: Այս պատճառով նախքան Միասնական ՓԿՈ – Վերաբնակեցման ընթացակարգեր սկսելը կարևոր է ապահովել համապատասխան երաշխիքների առկայությունը հատուկ Միասնական ՓԿՈ-Վերաբնակեցման ընթացակարգերի համար նախատեսված ՍԳԸ-ների միջոցով, ինչպես նաև ապահովելով, որ գործնականում պահպանվեն բոլոր ընթացակարգային երաշխիքները, այդ թվում՝ ՎԳՁ վերանայման/ստուգման հետ կապված:

ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ: Միասնական ՓԿՈ – վերաբնակեցման ընթացակարգերի իրականացումը հիմնված է հետևյալ գործոնների վրա.

- ▶ Գործերի մեծ ծավալի առկայություն, որոնք ունեն մեծ [Ներառման կանխավարկած](#), և վերաբնակեցման քվոտա, որը համաձայնեցված է Վերաբնակեցման պետությունների հետ հատուկ այդ գործերի համար,
- ▶ Միասնական ՓԿՈ-վերաբնակեցման ընթացակարգերի միջոցով պատրաստված ՎԳՁ-ների հիման վրա վերաբնակեցման համար դիմումներ ներկայացնելու մասին որոշման հաստատում վերաբնակեցման պետությունների կողմից,
- ▶ Նույնականացման և/կամ սքրինինգի մեխանիզմների առկայություն, որոնք թույլ կտան գործերի լայն համատեքստում նույնականացնել այն գործերը, որոնց դեպքում [i] ամենաշատն է զգացվում վերաբնակեցման կարիք, և որոնք համապատասխանում են վերաբնակեցման բոլոր չափանիշներին, և [ii] որոնք հարմար են (քանի որ չեն պարունակում բարդությունների նշաններ կամ բացառման խթաններ) Միասնական ՓԿՈ-Վերաբնակեցման ընթացակարգով քննության համար,
- ▶ Ուղղորդման մեխանիզմների առկայություն, որոնք հեշտացնում են գործերի ուղղորդումը դեպի [Կանոնավոր ՓԿՈ](#), կամ այն գործերի [Առաջնահերթության վերանայումը](#), որոնց համար որոշվում է քննության այս ձևը, սակայն որոնք այնուհետև համարվում են ոչ հարմար նման եղանակով քննության համար արժանահավատության հետ կապված մտահոգությունների, բարդության, ընտանիքի միավորման չլուծված խնդիրների, հնարավոր [Բացառման խթանների](#) կամ այլ պատճառներով,
- ▶ Յուրաքանչյուր գործի համար վերանայման, վերահսկողության և լուծման պատշաճ ընթացակարգերի առկայությունը՝ հաշվի առնելով, որ միասնական ՓԿՈ-Վերաբնակեցման գործընթացը չի ներառում ՄԱԿ ՓԳՀ կողմից փախստականի կարգավիճակի ճանաչում:

¹⁸ Նախկինում որոշ համատեքստերում կոչվում էր «Մասնատված ՓԿՈ» և «Վերաբնակեցում»: Մասնատված ՓԿՈ – Վերաբնակեցումը չունի սահմանված իմաստ, և հետևաբար տերմինի օգտագործումը չի խրախուսվում:

¹⁹ Վերաբնակեցման այլ պարզեցված գործընթացներ, որոնք չեն պահանջում ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից փախստականի կարգավիճակի պաշտոնական որոշումը նախքան վերաբնակեցման ուղղորդումը, չեն մտնում միասնական ՓԿՈ – վերաբնակեցման ընթացակարգերի սահմանման մեջ (հենց այն պատճառով, որ դրանք չեն ենթադրում փախստականի կարգավիճակի որոշում):

► ՍԳԸ-ներ, որոնք առանձնահատուկ նախատեսված կամ հարմարեցված են գործառնական համատեքստի համար, և

► Համապատասխան անձնակազմի բնութագրեր և անձնակազմի մակարդակներ, վերապատրաստում և հմտություններ, որոնք կապահովեն, որ բոլոր ՍԳԸ-ներում պարունակվող երաշխիքներն ամբողջությամբ իրականացվեն:

Քանի որ Միասնական ՓԿՈ-Վերաբնակեցումը հիմնականում ուղղված է վերաբնակեցմանը, այն դեպքերում, երբ ակնհայտ է դառնում, որ գործը պիտանի չէ վերաբնակեցման համար, այն պետք է ուղղորդվի **Կանոնավոր ՓԿՈ** կամ համարվի **Ոչ առաջնահերթ**: Պարտադիր չէ, որ Միասնական ՓԿՈ-Վերաբնակեցումը լին գործի քննության միակ եղանակը կոնկրետ գործառնության շրջանակում: Այն կարող է իրականացվել գործերի վարման այլ ձևերին, այդ թվում՝ **Արագացված ՓԿՈ-ին** և **Պարզեցված ՓԿՈ-ին** զուգահեռ, սակայն այս եղանակները պետք է մնան իրարից առանձին ու հստակ:

Հազվագյուտ դեպքերում՝ խնդրո առարկա անձանցից աշխարհագրական առումով ՄԱԿ ՓԳՀ-ի հեռու գտնվելու կամ այլ պատճառներով, որոնք սահմանափակում են ՄԱԿ ՓԳՀ-ի հասանելիությունը այն անձանց նկատմամբ, որոնց համար վերաբնակեցումը համարվում է ամենատեղին տեղական լուծումը, Միասնական ՓԿՈ-Վերաբնակեցումը կարող է կիրառվել ավելի փոքրածավալ կամ անհատական գործերում: Վերջին խումբը կարող է ներառել, օրինակ, կալանքի մեջ գտնվող անձանց, ում նկատմամբ ՄԱԿ ՓԳՀ-ն ունի սահմանափակ հասանելիություն:

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ: Հաշվի առնելով այս նախապայմանները՝ պարզ է, որ Միասնական ՓԿՈ-Վերաբնակեցման գործընթացը շարունակելու է մնալ որպես բացառություն, այլ ոչ թե նորմա:

Կանոնավոր ՓԿՈ համեմատությամբ՝ Միասնական ՓԿՈ-Վերաբնակեցման ընթացակարգերը կրճատում են դիմումատուի հետ անհատական հարցազրույցների քանակը, և հետևաբար դիմումատուի հայցի քննության վրա ծախսվող ժամանակը: Սա իր հերթին կարող է սահմանափակել ՄԱԿ ՓԳՀ-ի՝ արժանահավատությունը և/կամ հնարավոր բացառման մտահոգությունները նկատելու և պատշաճ կերպով քննելու կարողությունը: Դա նաև կարող է փոքրացնել ՄԱԿ ՓԳՀ-ի՝ դիմումատուի հայցի բոլոր կողմերը քննելու հնարավորությունը, այդ թվում՝ ՄԱԿ ՓԳՀ-ի՝ արժանահավատությանն առնչվող ուժեղ հիմնավորված եզրակացություններ ներկայացնելու և խաբեության ռիսկերը նվազեցնելու հնարավորությունը: Այս պայմաններում Միասնական ՓԿՈ – Վերաբնակեցման ընթացակարգում հարկավոր է ապահովել Միասնական հարցազրույցների պատշաճ գրանցումը (գերադասելի է՝ ուղղակիորեն գրի առնելու և բարձրորակ ձայնագրության միջոցով, առնվազն երկու եղանակներից մեկի միջոցով):

Միասնական ՓԿՈ – Վերաբնակեցման ընթացակարգերը չպետք է կիրառվեն բարձր **Ներառման կանխավարկածի** և այդ կոնկրետ դեպքերի համար նախատեսված վերաբնակեցման վայրերի բացակայության դեպքում²⁰: Ավելին, Միասնական ՓԿՈ – Վերաբնակեցման ընթացակարգերը պետք է վերաբերեն կոնկրետ ազգությանը/գործերի տեսակին և, հետևաբար, չպետք է կիրառվեն այնպիսի վերաբնակեցման գործերում, որոնք ներառում են ազգությունների և բնութագրերի խառնուրդ:

Նույնիսկ, երբ բավարարված են Միասնական ՓԿՈ-Վերաբնակեցման ընթացակարգերի իրականացման պայմանները, և երբ նման ընթացակարգերի կիրառությունը կոնկրետ ազգության/գործերի խմբի համար հաստատվել է (տես «Լիազորումը» ստորև), Միասնական ՓԿՈ-Վերաբնակեցման ընթացակարգերը չպետք է կիրառվեն միջազգային պաշտպանության բարդ հայցերի, զգայուն հայցերի, արժանահավատության խնդիրներ կամ բացառման մտահոգություններ պարունակող գործերի դեպքում: Միասնական խառը քննության գործընթացում գտվող գործերը, որոնք այս պատճառներից որևէ մեկի (կամ այլ պատճառների) առկայության դեպքում համարվում են միասնական քննության համար ոչ պիտանի կամ պետք է ճանաչվեն ոչ առաջնահերթ՝ նախապես համաձայնեցված չափանիշներին համապատասխան (ինչպես արվում է, օրինակ, Մերձավոր

²⁰ Բացառությամբ այն հազվագյուտ դեպքերի, երբ միասնական ՓԿՈ – վերաբնակեցումը տեղին է:

Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի տարածաշրջանի սիրիացիների և իրաքցիների գործերի միասնական քննության համատեքստում), կամ ուղղորդվեն Կանոնավոր ՓԿՈ միջոցով քննության:

ԼԻԱԶՈՐՈՒՄ: Հաշվի առնելով, որ Միասնական ՓԿՈ-Վերաբնակեցման ընթացակարգերը ենթադրում ՓԿՈ և Վերաբնակեցման ընթացակարգերի հարցազրույցների մեկտեղում, դրանք չպետք է իրականացվեն առանց նախապես Տարածաշրջանային բյուրո(ներ)ի՝ ՓԿՈ և վերաբնակեցման համար նշանակված պատասխանատուի, ինչպես նաև հետ MPB գործառական բաժինների, այդ թվում՝ Վերաբնակեցման և լրացուցիչ ուղիների ծառայության հետ խորհրդակցելու: Միասնական ՓԿՈ-Վերաբնակեցման ընթացակարգերի իրականացման մասին *վերջնական* որոշում կարող է կայացվել միայն հիմնական նկատառումների, այդ թվում՝ ռեսուրսների պատշաճ բաշխում ապահովելու անհրաժեշտության համակողմանի վերլուծությունից հետո (ինչպես սահմանված է վերը՝ «Կիրառությունը» և «Նախագգուշացումներ» բաժիններում): Միասնական ՓԿՈ-Վերաբնակեցման ընթացակարգերի իրականացման համար պահանջվում է նախապես ստանալ Տարածաշրջանային բյուրո(ներ)ի և համապատասխան ՄՊԲ ՓԿՈ մարմինների (ՓԿՈ բաժին, Վերաբնակեցման և օժանդակ ուղիների ծառայություն, Պրոգերսիվ կարիքների, ուժերի և լուծումների շրջանակ) հավանությունը: Միասնական ՓԿՈ – վերաբնակեցման ՍԳԸ-ները պետք է վերանայվեն Տարածաշրջանային բյուրո(ներ)ում ՓԿՈ և վերաբնակեցման համար նշանակված պատասխանատու(ներ)ի կողմից:

II. ՀԱՐԱԿԻՑ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բառարանի այս բաժնում խմբավորված են այն տերմինները, որոնց միջոցով նկարագրվում են գործերի վարման եղանակները և դրանց կիրառության ձևերը, բայց որոնք ինքնին գործերի վարման եղանակներ չեն:

Որպեսզի գործերի վարման տարբերակված եղանակները արդյունավետ գործեն, անհրաժեշտ է լինելու նույնականացնել գործերը և որոշ դեպքերում առաջնահերթ կերպով քննել դրանք: Գործերի նույնականացման և առաջնահերթության սահմանները չափանիշները պետք է մշակվեն՝ հաշվի առնելով կոնկրետ համատեքստը և գործերի տեսակները: Ավելին, գործերը կարող են նույնականացվել՝ դրանք որոշակի եղանակով վարելու, ինչպես նաև դրանք չքննելու կամ դրանց նվազ առաջնահերթություն տալու նպատակով:

i. Նույնականացում

ՓԿՈ-ով պայմանավորված ընդունելիության գնահատում

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ: ՓԿՈ-ով պայմանավորված ընդունելիության գնահատումներ են իրականացվում որոշ գործառնություններում՝ որոշելու, թե արդյոք ՄԱԿ ՓԳՀ-ն պետք է իրեն դիմած անձին գրանցի ապաստան հայցող՝ ՓԿՈ իրականացման նպատակով: «ՓԿՈ-ով պայմանավորված ընդունելիության գնահատում» տերմինը չի ներառում անձին ՓԿՈ հետ առնչություն չունեցող պատճառներով, օրինակ՝ պաշտպանության և աջակցության այլ ձևերի համար գրանցել-չգրանցելու մասին որոշումները: Նման գնահատումները պետք է տարբերակվեն **ՓԿՈ նպատակով գործի նույնականացումից** այն իմաստով, որ ՓԿՈ-ով պայմանավորված ընդունելիության գնահատումները վերաբերում են դեռևս ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից չգրանցված անձանց: ՓԿՈ-ով պայմանավորված ընդունելիության գնահատում իրականացնելով՝ ՄԱԿ ՓԳՀ-ն գնահատում է, թե արդյոք նման անձինք պետք է գրանցվեն և հնարավորություն ստանան մասնակցելու ՄԱԿ ՓԳՀ ՓԿՈ ընթացակարգերին:

ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ: Ի տարբերություն պետությունների կողմից իրականացվող ՓԿՈ ընթացակարգերին՝²¹ ՄԱԿ ՓԳՀ-ն, որպես կանոն, չունի ընդունելիության ընթացակարգեր՝ որոշելու համար, թե արդյոք է պետք է թույլ տալ անձին մասնակցել ՓԿՈ ընթացակարգին: Ինչևէ, լինում են իրավիճակներ, երբ ՄԱԿ ՓԳՀ-ն կարող է իրականացնել ՓԿՈ-ով պայմանավորված ընդունելիության գնահատում, որի արդյունքում կայացվում է որոշում ՓԿՈ նպատակով անձին ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից որպես ապաստան հայցող գրանցելու կամ չգրանցելու մասին: Նման իրավիճակները ներառում են, օրինակ,

- ▶ այն դեպքերը, երբ կա ապաստանի ազգային գործող համակարգ, որը ներառում է պետական գրանցման ընթացակարգերը, և այս ապաստանի ընթացակարգերը (ընդհանուր առմամբ) արդար և արդյունավետ են, սակայն ապաստանի ազգային համակարգը անհասանելի է և ապաստան հայցողների որոշ խմբերի համար արդար արդյունքների չի հանգեցնում: Նման դեպքերում ՓԿՈ-ով պայմանավորված ընդունելիության գնահատման նպատակն է սահմանել, թե արդյոք առկա են փախստականի կարգավիճակի համար իրավասությունը ՄԱԿ ՓԳՀ մանդատի շրջանակում

²¹ Պաշտոնական թույլատրելիության ընթացակարգերը առավել հաճախ իրականացվում են Կառավարության ընթացակարգերում՝ որոշելու համար, թե որ պետությունն է պատասխանատվություն կրում դիմումատուի միջազգային պաշտպանության հայցը որոշելու համար: Նման ընթացակարգերը ընդունվում են այն իրավիճակներում, երբ պետություններն ունեն ընթացակարգեր, որոնք վերաբերում են, օրինակ, առաջ շարժմանը:

գնահատելու պատճառներ: (ՄԱԿ ՓԳՀ շրջանակում այսպես կոչված «գուգահեռ» կամ «մնացորդային» ՓԿՈ գործընթացում, տես Ծանոթագրություններ 1-ը և 9-ը),

► երբ առկա է ակնհայտ ցուցում այն մասին, որ անձը չի համապատասխանում փախստականի սահմանման՝ «իր քաղաքացիության երկրից դուրս գտնվելու» չափանիշներին (այն է՝ հյուրընկալող պետության քաղաքացի է) (և այս տեղեկատվությունը հասանելի չի եղել գրանցման փուլում, քանի որ այն կազդեր ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից գրանցվելու իրավասության վրա),

► երբ պատճառներ կան հավատարմ, որ անձը կարող է լինել ռազմական կամ զինված գործողություններում ակտիվորեն ներգրավված [կամ ներգրավվածությունից մշտապես չհրաժարված] զինվոր/մարտիկ (և այս տեղեկատվությունը հասանելի չի եղել գրանցման փուլում, քանի որ այն կազդեր ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից գրանցվելու իրավասության վրա, կամ երբ առկա են եղել պատճառներ, որոնցով պայմանավորված՝ այս հարցին լիարժեք անդրադարձ չի կատարվել գրանցման փուլում):

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ: ՓԿՈ-ով պայմանավորված ընդունելիության գնահատումները պետք է իրականացվեն միայն գործ առ գործ՝ անհատական հիմունքներով, քանի որ դրանք կարող են հանգեցնել նրան, որ անձը չկարողանա օգտվել մանդատի շրջանակում իրականացվող ՓԿՈ ընթացակարգերից, և այսպիսով կարող են լուրջ հետևանքներ ունենալ այդ անձի կյանքի և անվտանգության համար: Ընդունելիությունը որոշելու համար կիրառվող չափանիշները պետք է հստակորեն սահմանվեն համապատասխան ՍԳԸ-ներում (ներառյալ՝ գրանցումը, ինչպես նաև ՓԿՈ ՍԳԸ-ները) և պետք է նախատեսեն ընդունելիություն, եթե դա պահանջվում է անձի հանգամանքներում տեղի ունեցող փոփոխությունների կամ անձի ծագման երկրի պատճառով: ՓԿՈ-ով պայմանավորված ընդունելիության գնահատումները չպետք է երբևէ կիրառվեն ՓԿՈ հասանելիությունը մերժելու այն անձանց, ում միջազգային պաշտպանության հայցերը **Ակնհայտորեն անհիմն** են թվում: Այն դեպքերում, երբ որոշվում է, որ որոշ անձինք չեն գրանցվելու որպես ապաստան հայցողներ, պետք է, այնուամենայնիվ, գրանցվել անձի կենսագրական տվյալները, ինչպես նաև ՄԱԿ ՓԳՀ ընթացակարգերից օգտվելը մերժելու պատճառները: Հնարավոր է՝ հարկավոր լինի նրանց գրանցել գրասենյակի proGres տվյալների բազայում՝ որպես «խնդրո առարկա այլ անձինք» կամ «ոչ խնդրո առարկա անձինք»՝ [Գրանցման ձեռնարկին²²] համապատասխան: Անձանց հարկավոր է ուղղորդել գործընկերներին կամ Կառավարական ծառայություններին՝ ըստ անհրաժեշտության:

ԼԻԱԶՈՐՈՒՄ: ՄԱԿ ՓԳՀ գործառնություններում չպետք է իրականացվեն ՓԿՈ-ով պայմանավորված գնահատումներ՝ առանց առաջին հերթին Տարածաշրջանային գրասենյակում նշանակված ՓԿՈ և գրանցման պատասխանատու(ներ)ի հետ խորհրդակցելու, մասնավորապես՝ նման գնահատումների համար կիրառվող չափանիշների վերաբերյալ: ՍԳԸ-ները, որոնք ներառում են ՓԿՈ-ով պայմանավորված ընդունելիության գնահատումներ, պետք է վերահսկվեն տարածաշրջանային գրասենյակ(ներ)ում նշանակված ՓԿՈ պատասխանատուի կողմից, որը պետք է խորհրդակցի ՄՊԲ, ՓԿՈ բաժնի հետ (ՓԿՈ-ի հասանելիության վերաբերյալ), Պրոգրեսիվ կարիքների, ուժերի և լուծումների և Միասնական առաքելության ռեսուրսների համակարգի հետ (գրանցման հետ կապված):

ՓԿՈ նպատակով գործի նույնականացում

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ: ՓԿՈ նպատակով գործի նույնականացումը նոր տերմին է, որը փոխառվել է ներկայումս Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի տարածաշրջանում կիրառվող տերմինից, որն այդ համատեքստում օգտագործվում է Միասնական ՓԿՈ – Վերաբնակեցման գործերի տեսակավորման համար: «Գործի նույնականացում» ('Case ID' և 'Case Identification') տերմիններն ի սկզբանե մշակվել են ՄԱԿ ՓԳՀ գործառնություններում, որոնց շրջանակում իրականացվում է ՓԿՈ

²² Գրանցման ձեռնարկը ներկայումս թարմացվում է և կներառի ուղեցույց՝ անձանց որպես «այլ խնդրո առարկա անձ» կամ «ոչ խնդրո առարկա անձ» գրանցելու վերաբերյալ:

միայն ապաստան հայցողների գործերի մի մասին համար, օրինակ՝ որոշակի բնութագիր ունեցող անձանց համար, կամ այն անձանց համար, որոնք ունեն նախապես սահմանված հատուկ պաշտպանության կարիքներ կամ ամենայն հավանականությամբ համապատասխանում են վերաբնակեցման չափանիշներին: Դա վերաբերում է այն գործընթացին, որի շրջանակում նույնականացվում է, թե որ գործերը պետք է քննվեն (կամ որ գործերին պետք է առաջնահերթություն տրվի): ՓԿՈ նպատակով գործի նույնականացում տերմինը ներառում է մասնավորապես ՓԿՈ-ն և չի ներառում այլ պաշտպանական միջամտությունների նպատակով արվող գործերի նույնականացումը:

ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ: Ընդհանուր ՓԿՈ-ին և ՓԿՈ գործերի վարման կոնկրետ եղանակին ուղղորդելու նպատակով արվող գործերի նույնականացումը հիմնականում ՓԿՈ գործերի տեսակավորման ձև է: Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի տարածաշրջանից դուրս իրականացվող որոշ այլ անհատական գործառնություններում գործում են նմանատիպ (հաճախ կոնկրետ համատեքստին խիստ հատուկ) մեխանիզմներ:

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ: ՓԿՈ նպատակով գործերի նույնականացում պետք է իրականացվի արդար և թափանցիկ կերպով՝ նախապես սահմանված, պաշտպանության վրա հիմնված չափանիշներին համապատասխան: Ինչպես ՓԿՈ նպատակով ընտրությունը, այնպես էլ չընտրելու մասին որոշումը (կամ [Առաջնահերթություն չտալը](#)) (և գործի վարման այլ անհատական քայլեր) կարող են մեծ հետևանքներ ունենալ խնդրո առարկա անձանց համար: Դա խաբեության առումով խոցելի ոլորտ է, քանի որ անձինք կարող են փորձել ազդել գործընթացի վրա, որպեսզի համապատասխանեն ՓԿՈ նպատակով գործերի տեսակավորման համար մշակված չափանիշներին: Այդ պատճառով պետք է լինի արդյունավետ վերահսկողություն, այդ թվում՝ երբ գործընկեր կազմակերպությունները դերակատարում ունեն գործի նույնականացման հարցում: Պետք է մշակվեն և կիրառվեն հստակ և ստուգելի չափանիշներ, ինչպես նաև իրականացվեն համապատասխան ստուգումներ և հավասարակշռում: Պետք է գործեն բողոքարկման արդյունավետ մեխանիզմներ: Իդեալական տարբերակում գործառնություններում պետք է իրար զուգահեռ կիրառվեն գործերի նույնականացման բազմազան մեթոդներ, որպեսզի ապահովվի գործերի անհատական քննության տարբեր ուղիների առկայություն: Գործառնություններում, որոնք ուղղված են ՓԿՈ նպատակով գործերի նույնականացման իրականացմանը, պետք է ապահովվի գործողությունների մակարդակում սերտ համագործակցություն, ինչպես նաև ներդրվի հաղորդակցության և կապի ռազմավարություն, որպեսզի այնպես արվի, որ խնդրո առարկա անձինք լիարժեք կերպով հասկանան ընտրվելու և չընտրվելու հետևանքները:

ԼԻԱԶՈՐՈՒՄ: Քանի որ ՓԿՈ նպատակով գործերի նույնականացման իրականացումը առավել հաճախ գործերի վարման այլ եղանակների ընդունման նախադրյալ է, այն ենթակա է գործերի վարման որոշակի եղանակի համար իրավասության պահանջներին, ինչպես սահմանված է սույն Բառարանում:

ii. Առաջնահերթության սահմանում [ՓԿՈ համար]

Առաջնահերթության սահմանման հասկացությունը պետք է տարբերակվի արագացումից կամ [Արագացված ՓԿՈ-ից](#), քանի որ առաջնահերթության սահմանումն ինքնին չի ազդում գործի քննության ժամկետների վրա, այլ ենթադրում է որոշակի գործերի քննությանը մոյս գործերի համեմատությամբ առաջնահերթություն տալը, օրինակ՝ հատուկ կարիքների հիման վրա կամ պաշտպանական միջամտության բացահայտ կարիք ունեցող անձանց դեպքում (օրինակ՝ դիմումատուներ, որոնց մոտ հայտնաբերվել են ֆիզիկական/իրավական պաշտպանության հրատապ կարիքներ, այդ թվում՝ անձինք, որոնք ենթակա են վերահաս *վերադարձեցության* կամ կամայական ձերբակալման կամ կալանավորման

վտանգի հյուրընկալող երկրում):²³ Ինչևէ, ինչպես նշված է սույն Բառարանում՝ Արագացված ՓԿՈ կապակցությամբ, առաջնահերթություն ստացած գործերը կարող են նաև քննվել արագացված կարգով:

iii. Առաջնահերթության վերացում [ՓԿՈ համար]

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ: Չնայած այս տերմինը գործածության մեջ է մտել՝ կապված որոշակի գործերի հետ, որոնք ՓԿՈ և վերաբնակեցման նպատակով քննվում են Միասնական ՓԿՈ - Վերաբնակեցման ընթացակարգով,²⁴ դա մի հասկացություն է, որը ավելի տեղին է գործածել՝ նկարագրելու համար գործառնության՝ գործերի վարման ռազմավարությունը՝ անկախ նրանից՝ վերաբնակեցումը ցանկալի ելքն է, թե ոչ: Գործերի առաջնահերթության վերացումը չի սահմանափակվում միայն Միասնական ՓԿՈ - Վերաբնակեցման ընթացակարգով և կարող է տեղի ունենալ ինչպես Միասնական ՓԿՈ - Վերաբնակեցման ընթացակարգերում, այնպես էլ այլ ընթացակարգերում:

Գործի առաջնահերթության վերացումը նշանակում է, որ գործը չի քննվելու այնքան ժամանակ, քանի դեռ պաշտպանության իրավիճակում փոփոխություններ առաջ չեն եկել, կամ Առաջնահերթության վերացման չափանիշները չեն փոխվել: Այս իմաստով Առաջնահերթության վերացումը չպետք է դիտվի որպես փախստականի կարգավիճակ ստանալու իրավասության վերաբերյալ հայտարարություն կամ որոշում: Առաջնահերթության վերացումը, որպես այդպիսին, չի ազդում այլ պաշտպանական միջամտությունների վրա և չի կանխորոշում որոշումների կայացման որևէ գործընթացի ելքը, որը կարող է տեղի ունենալ կամ տեղի չունենալ ավելի ուշ փուլում: Առաջնահերթության վերացման հետևանքը կարող է լինել այն, որ գործն այլևս չստանա որոշակի ընթացք կամ կասեցվի է այնքան ժամանակով, քանի դեռ իրավիճակը չի փոխվել, կամ չեն փոխվել առաջնահերթության վերացման չափանիշները:

ԿԻՐԱՆՈՒԹՅՈՒՆ: Վերը նկարագրված գործառնական համատեքստում գործերը, որոնք նախասահմանված հաստատված չափանիշների հիման վրա համարվում են ոչ պիտանի վերաբնակեցման համար, կամ որոնց համար Կանոնավոր ՓԿՈ ընթացակարգի դեպքում կպահանջվեր խորը ուսումնասիրություն և գնահատում, կարող են զրկվել առաջնահերթությունից:

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ: Կարևոր է նշել, որ որոշակի գործ կամ գործերի ամբողջ փաթեթը առաջնահերթությունից զրկելու մասին որոշումը պետք է կայացվի հատուկ պաշտպանության խնդիր իրականացնելու նպատակով և պետք է հիմնված լինի այն հետևանքների հստակ վերլուծության վրա, որոնք Առաջնահերթությունից վերացումը կունենա այն անձանց համար, որոնց գործերը զրկվում են առաջնահերթությունից: Այն գործերի առաջնահերթության վերացումը, որոնք հակառակ դեպքում քննվելու էին, պետք է տեղի ունենա միայն կոնկրետ համատեքստի համար համաձայնեցված հանգամանքներում: Պետք է մշտապես առկա լինեն Տարածաշրջանային բյուրոյի, Պրոգրեսիվ կարիքների, ուժերի և լուծումների շրջանակի և ՓԿՈ Բաժնի կողմից հաստատված ՍԳԸ-ներ, որոնք կսահմանեն այն չափանիշներն ու ընթացակարգերը, որոնցով տեղի է ունենալու Առաջնահերթության վերացումը:

Եթե գործը, որը հակառակ պարագայում կզրկվեր առաջնահերթությունից, հարուցում է պաշտպանության հետ կապված հրատապ կամ հատկապես սուր մտահոգություններ, որոնք կարող են միայն/լավագույնս լուծվել վերաբնակեցման միջոցով, կամ որի համար պահանջվում է

²³ Տես նաև Բաժին 4.6.3, ՄԱԿ ՓԳՀ, *ՄԱԿ ՓԳՀ մանդատի շրջանակում փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգային չափանիշներ*, 20 նոյեմբերի 2003թ., <http://www.refworld.org/docid/42d66dd84.html>. Նոր կամ թարմացված գլուխները հասանելի են հետևյալ հասցեով՝ <http://www.refworld.org/rsdproceduralstandards.html>.

²⁴ Գործնականում դա նշանակում է, որ այն դեպքերը, որոնք դժվար են կամ հարմար չեն վերաբնակեցման համար, կամ որոնցով ներգրավված անձինք չեն ցանկանում վերաբնակեցվել, և/կամ դրանց համար պահանջվում է զգալի լրացուցիչ գործընթաց՝ արժանահավատության հետ կապված մտահոգությունների, բարդության, ընտանեկան միասնության չլուծված խնդիրների կամ պոտենցիալ Բացառման խթանների պատճառով, զրկվում են առաջնահերթությունից՝ նախապես սահմանված չափանիշների համապատասխան:

Կանոնավոր ՓԿՈ, այնուամենայնիվ կարող է անհրաժեշտ լինել քննել գործը: ՄԳԸ-ները պետք է նման գործերի վերանայման և ստուգման հստակ ընթացակարգեր սահմանեն: Նման իրավիճակներում գործը չպետք է քննվի [Միասնական ՓԿՈ... Վերաբնակեցման](#) ընթացակարգով, այլ պետք է քննվի [Կանոնավոր ՓԿՈ-ով](#):

ԼԻԱԶՈՐՈՒՄ: Առաջնահերթության վերացման չափորոշիչները պետք է մշակվեն (և թարմացվեն)՝ խորհրդակցելով Տարածաշրջանային բյուրո(ներ)ում նշանակված ՓԿՈ և վերաբնակեցման պատասխանատու(ներ)ի հետ, և դրանց համար պահանջվում է ՄՊԲ ՓԿՈ բաժնի, Պրոգրեսիվ կարիքների, ուժերի և լուծումների նախնական համաձայնությունը, ինչպես նաև Վերաբնակեցման և լրացուցիչ ուղիների ծառայության նախնական համաձայնությունը այն դեպքերում, երբ Առաջնահերթության վերացումն իրականացվում է վերաբնակեցման նպատակով:

IV. Բացառման խթաններ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ: Բացառման խթանը վերաբերում է անձի նկարագրի, (անցյալ) գործունեության և պարտականությունների (և այլն) այն տարրերին, որոնք առաջացնում են մտահոգություններ առ այն, որ անձի վրա կարող են տարածվել 1951 թվականի Կոնվենցիայի 1-ին հոդվածի Զ մասի (ա), (բ) կամ (գ) կետերի բացառման դրույթները: Նման մտահոգություններ առաջացնող խնդիր(ներ)ը կարող է(են) լինել գործին կամ անձի նկարագրին հատուկ և կարող են առաջ գալ հայցի քննության ցանկացած փուլում:

ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ: Բացառման խթանի հասկացությունը կարող է կիրառվել գործի վարման ցանկացած եղանակի շրջանակում՝ ցույց տալու, որ գործը ներառում է բացառման հետ կապված մտահոգություններ, որոնք երաշխավորում են հետագա քննությունը: Համատեքստից, այդ թվում՝ անձի՝ պաշտպանության իրավիճակից կախված՝ Բացառման խթան առաջացնող գործերը կարող են ուղղորդվել կամ [Կանոնավոր ՓԿՈ-ի](#), կամ [Առաջնահերթության վերացման](#):

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ: Բացառման խթանի գոյությունը ինքնին չի մատնանշում, թե արդյոք անձի վրա տարածվում է 1-ին հոդվածի Զ մասով սահմանված բացառման դրույթը, թե ոչ, ուստի պետք է բացառվի, թե ոչ: Այլ խոսքով՝ այն չի կանխորոշում գործով փախստականի կարգավիճակի մասին դիմումի կոնկրետ ելքը: Ավելի շուտ՝ Բացառման խթանը նշանակում է, որ 1951 թվականի Կոնվենցիայի 1-ին հոդվածի Զ մասի հնարավոր կիրառությանն առնչվող կոնկրետ խնդիրը պետք է ուսումնասիրվի ավելի մանրակրկիտ կերպով՝ [Կանոնավոր ՓԿՈ](#) ընթացակարգում հետագա ՓԿՈ քննության ընթացքում: Կախված համատեքստից՝ այն կարող է նշանակել, որ գործի [Առաջնահերթությունը պետք է վերացվի](#), և/կամ գործը պետք է պիտակվի որպես ընթացքում գտնվող (proGres)՝ հետագա վերանայման նպատակով:

ԼԻԱԶՈՐՈՒՄ: Երբ գործի վարման եղանակների շրջանակում հիմնվում են Բացառման խթանների ցուցակների վրա, դրանք պետք է մշակվեն Տարածաշրջանային բյուրո(ներ)ում նշանակված ՓԿՈ և վերաբնակեցման պատասխանատու(ներ)ի հետ խորհրդակցությամբ: Նման ցուցակներին ապավինելուց առաջ՝ հարկավոր է ստանալ ՄՊԲ ՓԿՈ բաժնի, Պրոգրեսիվ կարիքների, ուժերի և լուծումների և Վերաբնակեցման և լրացուցիչ ուղիների ծառայության նախնական համաձայնությունը:

V. Գործերի ելքերի

ՄԱԿ ՓԳՀ մանդատի շրջանակում փախստականի կարգավիճակի որոշման (ՓԿՈ) գործերի նկատմամբ կիրառելի՝ գործերի քննության եղանակների, հասկացությունների և տերմինների հուշագիր և բառարան

կանխատեսման որոշակի հավանականություն ներառող հասկացություններ Ակնհայտորեն անհիմն²⁵

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ: Համաձայն ՄԱԿ ՓԳՀ առկա ուղեցույցի սահմանման՝ «Ակնհայտորեն անհիմն» տերմինը օգտագործվում է փախստականի կարգավիճակի այն դիմումները բնութագրելու համար, որոնք «ակնհայտորեն կապ չունեն փախստականի կարգավիճակի չափորոշիչների հետ», կամ որոնք «ակնհայտորեն հիմնված են կեղծիքի կամ օրենքի չարաշահման վրա»:²⁶ Հարկ է նշել, որ միայն այն դեպքում հայցը կարող է համարվել «բացահայտ խարդախ», եթե դիմողն իր կարգավիճակի որոշման համար էական նշանակություն ունեցող կեղծ հայտարարություններ է ներկայացնում, և հայցը ակնհայտորեն չի պարունակում լրացուցիչ քննություն պահանջող այլ տարրեր: ՄԱԿ ՓԳՀ-ին կեղծ հայտարարություններ ներկայացնելու փաստը ինքնին, սակայն, չի նշանակում, որ հայցը կարող է չհամապատասխանել փախստականի կարգավիճակի չափորոշիչներին, ոչ էլ բացառվում է ապաստանի անհրաժեշտությունը: Կեղծ հայտարարություններն ինքնին հայցը «բացահայտ խարդախ» չեն դարձնում:

Հայցը, որը համարվում է ակնհայտորեն անհիմն, պետք է տարբերվի ապաստանի հայցերից, որոնք ամենայն հավանականությամբ անհաջող ելք են ունենալու, բայց ներկայացված են ճշմարտության հիման վրա: Որոշ երկրների կամ պրոֆիլի դիմողների կողմից ներկայացված հայցերը նախկինում կամ ներկայումս կարող են ունենալ ճանաչման շատ ցածր մակարդակ: Մա, սակայն, պարտադիր չի ենթադրում, որ նման հայցերը «ակնհայտորեն» չեն առնչվում փախստականի կարգավիճակի չափորոշիչներին, կամ որ տվյալ երկրի կամ պրոֆիլի դիմողները բարեխղճորեն չեն գործում: «Ակնհայտորեն անհիմն» հասկացությունը վերաբերում է ոչ թե ընթացակարգին, այլ այն հայեցակարգին, որն ընկած է որոշակի լավ սահմանված չափորոշիչների հիման վրա հայցերի ուղղորդմանը դեպի [Արագացված ՓԿՈ](#) կամ [Պարզեցված ՓԿՈ](#) ընթացակարգեր:

ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ: Ակնհայտորեն անհիմն» հասկացությունը կարող է օգտակար գործիք լինել գործերի կառավարման համար, քանի որ եթե գործում առկա են ցուցումներ առ այն, որը գործը ամենայն հավանականությամբ ակնհայտորեն անհիմն է, այն կարող է քննվել գործերի վարման համապատասխան եղանակով՝ արդյունավետությունը բարելավելու համար: Գործնականում պատշաճ կիրառության դեպքում «ակնհայտորեն անհիմն» հասկացությունը ծառայում է այն ենթադրությանը, որ հայցը, ամենայն հավանականությամբ, ակնհայտորեն անհիմն է, եթե այն պարունակում է որոշակի հատկանիշներ: Ելնելով ստորև նշված նախազգուշացումներից, ինչպես նաև գրանցման պահից ուղղորդման հստակ չափորոշիչների հիման վրա, կարող է կիրառվել [Պարզեցված ՓԿՈ](#) և/կամ [Արագացված ՓԿՈ](#) կարող է կիրառվել այն հայցերի դեպքում, որոնք համարվում են ակնհայտորեն անհիմն՝ գործերի մշակման արդյունավետության ապահովման և ՄԱԿ ՓԳՀ ընթացակարգերի ամբողջականության պահմանման նպատակով:²⁷ Այնուամենայնիվ, խորհուրդ է տրվում նմանատիպ հայցերը չքննել [Միասնական գրանցում ... ՓԿՈ](#) ընթացակարգով, քանի որ հարցազրույցին հատկացվող կրճատված ժամանակը կարող է ազդել որոշում կայացնողի՝ հայցի բոլոր կողմերին անդրադառնալու կարողության վրա:

²⁵ ՄԱԿ ՓԳՀ-ի գործադիր կոմիտե, փախստականի կարգավիճակի կամ ապաստանի ակնհայտ անհիմն կամ չարաշահող դիմումների խնդիրը, 20 հոկտեմբերի 1983 թ., թիվ 30 (XXXIV) – 1983, <http://www.refworld.org/docid/3ae68c6118.html>, և ՄԱԿ-ի փախստականների հարցերով զբաղվող հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), Փախստականի կարգավիճակի որոշման վերաբերյալ միջազգային պաշտպանության ենթահանձնաժողովի ավելի վաղ եզրակացությունները, ի թիվս այլոց, կապված Փախստականի կարգավիճակի որոշման ազգային ընթացակարգերում ՄԱԿ ՓԳՀ-ի դերի հետ: Թիվ 28 (XXXIII) – 1982, 20 հոկտեմբերի 1982 թ., թիվ 28 (XXXIII) – 1982, <http://www.refworld.org/docid/3ae68c439c.html>:

²⁶ ՄԱԿ ՓԳՀ, *ՄԱԿ ՓԳՀ-ի դիրքորոշումը ապաստանի ակնհայտորեն անհիմն հայցերի վերաբերյալ*, 1 դեկտեմբերի 1992թ., 3 Եվրոպական շարք 2, էջ 397, <http://www.refworld.org/docid/3ae6b31d83.html>.

²⁷ Վերը՝ ծանոթագրություն 14:

Այն գործերը, որոնք համարվում են ակնհայտորեն անհիմն, և որոնցում գործի վարման ընթացքում հետագա քննության արդյունքում ի հայտ են գալիս հանգամանքներ, որոնք վկայում են հիմնավոր լինելու մասին, կարող են մնալ [Արագացված ՓԿՈ](#) ընթացակարգում, եթե այլ կերպ բավարարված են [Արագացված...ՓԿՈ](#) ընթացակարգի իրականացման չափորոշիչները: Նմանապես այնպիսի դեպքերում, երբ հայցը պարունակում է բարդություններ, որոնց պատճառով [Արագացված ՓԿՈ](#)-ն տեղին չէ, գործը պետք է փոխանցվի [Կանոնավոր ՓԿՈ](#) -ին:

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ: Եթե ակնհայտ անհիմն լինելու մասին վկայող ցուցումներ պարունակող գործերը դեպի [Արագացված ՓԿՈ](#) և/կամ [Պարզեցված ՓԿՈ](#) ուղղորդելու համար նախատեսված չափորոշիչները մանրակրկիտ մշակված չլինեն, կառաջանա միջազգային պաշտպանության հայցի գնահատման արդյունքը սխալ կանխորոշելու վտանգ:

«Ակնհայտորեն անհիմն» հասկացությունը չպետք է նույնականացվի այն հայցերի հետ, որոնք պարզապես ունեն ճանաչման ցածր մակարդակ, ինչպես նաև չպետք է նման ցուցումներ պարունակող հայցերի քննությունը պարունակի նվազ ընթացակարգային երաշխիքներ:

ԼԻԱԶՈՐՈՒՄ: «Ակնհայտորեն անհիմն» հասկացությունը գործերի խմբի կամ որոշակի պրոֆիլի նկատմամբ կիրառելու համար առաջին հերթին պահանջվում է խորհրդակցել տարածաշրջանային ՓԿՈ աշխատակցի հետ: Մինչ «Ակնհայտորեն անհիմն» հասկացության վրա հիմնվելով նման գործերի քննության ուղղորդումը դեպի [Արագացված ՓԿՈ](#) և/կամ [Պարզեցված ՓԿՈ](#) ընթացակարգեր արդարացնելը հարկավոր է խորհրդակցել Տարածաշրջանային բյուրոյում (ներում) և այլ համապատասխան ՄՊԲ մարմիններում (ՓԿՈ բաժին և/ կամ Պրոգրեսիվ կարիքների, ուժերի և լուծումների շրջանակ) ՓԿՈ-ի համար նշանակված պատասխանատուի հետ: Չնայած «ակնհայտորեն անհիմն» հասկացությունն ընկած է գործերի քննության եղանակների ընտրության հիմքում, չկան կիրառելի հատուկ ձևեր կամ ձևանմուշներ:

Ակնհայտորեն հիմնավորված

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ: «Ակնհայտորեն հիմնավորված» տերմինը վերաբերում է այն ապաստանի հայցերին, որոնցում հստակ երևում է, որ անձը համապատասխանում է փախստականի սահմանմանը՝ 1951 թվականի Կոնվենցիային կամ փախստականի կարգավիճակի ավելի լայն չափանիշներին համապատասխան: Սրա պատճառը կարող է լինել այն, որ անհատը մտնում է այն անձանց շրջանակի մեջ, որոնց նկատմամբ կիրառվում է [Ներառման կանխավարկածը](#), որի դեպքում գործում է [Առերոյք Prima Facie մոտեցումը](#), կամ այն, որ որոշակի փաստեր են ի հայտ գալիս անձի՝ միջազգային պաշտպանության դիմումի շրջանակում:

ԿԻՐԱՎԻՃԱԿԻԳ ԿԱԽՎԱԾ՝ [Պարզեցված ՓԿՈ](#) և/կամ [Արագացված ՓԿՈ](#), ճշիմումի՝ խմբի վրա հիմնված քննություն, [Միասնական ՓԿՈ. – Վերաբնակեցման](#) կամ [Միասնական գրանցում – ՓԿՈ](#) ընթացակարգեր կարող են կիրառվել նման հայցերի արագ քննության համար:

ԻՐԱՎԱՍՈՒՄԱՐՄԻՆ: Ամենայն հավանականությամբ Ակնհայտորեն հիմնավորված համարվող հայցը [Պարզեցված](#) և/կամ [Արագացված ՓԿՈ](#) կամ [Միասնական ՓԿՈ. – Վերաբնակեցման](#) կամ [Միասնական գրանցում – ՓԿՈ](#) ընթացակարգերով քննելու մասին որոշումը պետք է համաձայնեցվի գործերի վարման այդ դասակների համար նախատեսված իրավասու մարմինների հետ: Որպես կանոն, Ակնհայտորեն հիմնավորված դիմումների քննությունը չպետք է տեղի ունենա առանց Տարածաշրջանային բյուրոյում ՓԿՈ համար նշանակված պատասխանատուի կողմից համապատասխան ՄԳԸ-ների վերանայման:

Ներառման կանխավարկած

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ: Ներառման կանխավարկած (որը երբեմն կոչվում է նաև իրավասության կանխավարկած) կարող է գոյություն ունենալ այն դեպքում, երբ ծագման երկրում տիրող իրավիճակի

վերաբերյալ օբյեկտիվ ապացույցները ցույց են տալիս, որ որոշակի բնութագիր ունեցող դիմումատուներն ամենայն հավանականությամբ կհամապատասխանեն 1951 թվականի կոնվենցիայի 1Ա(2) հոդվածին կամ ՄԱԿ ՓԳՀ-ի՝ փախստականներին առնչվող փաստաթղթերով սահմանված համապատասխանության ավելի լայն չափանիշներին: Դա նշանակում է, որ եթե հաստատվի, որ անձը պատկանում է որոշակի խմբի կամ ունի որոշակի բնութագիր, նա կօգտվի հերքելի ենթադրությունից առ այն, որ նա փախստական է: Այն ապաստանի հայցերի դեպքում, որոնցում առկա են ցուցումներ, որ դրանք ակնհայտորեն հիմնավորված են, գործում է Ներառման կանխավարկածը:

ԿԻՐԱՆՈՒԹՅՈՒՆ: Ներառման կանխավարկածը կիրառվում է այն գործերի խմբի դեպքում, որոնցում առկա են օբյեկտիվ ապացույցներ, որոնք հուշում են, որ տվյալ բնութագիրն ունեցող դիմումատուներն ամենայն հավանականությամբ կունենան միջազգային պաշտպանության կարիք: Ներառման կանխավարկած, որպես կանոն, առկա է, եթե ՄԱԿ ՓԳՀ-ի՝ իրավասության վերաբերյալ արդի ուղեցույցներում կամ ՄԱԿ ՓԳՀ-ի պաշտպանության նկատառումներում նշվում է, որ հատուկ բնութագիր ունեցող անձինք «հավանաբար միջազգային պաշտպանության կարիք կունենան», բայց այն կարող է կիրառվել նաև այն դեպքերում, որոնց վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ-ն չի հրապարակել երկրին հատուկ ուղեցույց: Ներառման կանխավարկածը կարող է կիրառվել անհատականացված ՓԿՈ ընթացակարգերի շրջանակում, ինչպես նաև [Prima Facie մոտեցման](#) համատեքստում:

Գործերի վարման անհատական մոտեցումը, որը հիմնված է գործերի որոշակի խմբի համար նախատեսված Ներառման կանխավարկածի վրա, կարող է կիրառվել [Պարզեցված ՓԿՈ](#) տեսքով, որը կարող է նաև լինել [Արագացված](#) կամ [Միասնական գրանցման - ՓԿՈ](#) ընթացակարգերի կամ [ՄՄիասնական ՓԿՈ - Վերաբնակեցման](#) ձևով:

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ: Ներառման կանխավարկածը հերքելի է, ուստի այն չի ենթադրում, որ տվյալ բնութագրին համապատասխանող յուրաքանչյուր դիմումատու կամ որոշակի խմբին պատկանող յուրաքանչյուր դիմումատու ինքնաբերաբար կճանաչվի որպես փախստական: Եթե կան ցուցումներ, որ տվյալ դիմումատուն չունի միջազգային պաշտպանության կարիքներ, կամ որ կարող է կիրառվել [Բացառման խթան](#), նրանք պետք է ուղղորդվեն [Կանոնավոր ՓԿՈ](#)²⁸:

Քանի որ Ներառման կանխավարկածը կարող է հանդես գալ որպես [Պարզեցված ՓԿՈ](#), [Արագացված ՓԿՈ](#), [Միասնական գրանցման - ՓԿՈ](#) և [Միասնական ՓԿՈ - Վերաբնակեցման](#) ընթացակարգերի հիմնավորում, կարևոր է ապահովել համապատասխան երաշխիքներ, որպեսզի այն չկիրառվի այն բնութագրերի դեպքում, որոնք ենթակա չեն գործերի վարման այդ եղանակներին, ինչպես՝ օրինակ՝ բարդ գործերը, այն գործերը, որոնցում առկա են արժանահավատության մտահոգություններ կամ [Բացառման խթաններ](#) պարունակող գործերը: Կախված համատեքստից՝ դա կարող է նշանակել, որ նմանատիպ գործերը պետք է կորցնեն [Առաջնահերթությունը](#), ուղղորդվեն [Կանոնավոր ՓԿՈ](#) և/կամ նշվեն որպես ընթացքում գտնվող (proGres) գործեր՝ ապագայում վերանայման համար:

ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆ: Ներառման կանխավարկածի առկայության դեպքում [Պարզեցված](#) և/կամ [Արագացված ՓԿՈ](#) կամ [Միասնական գրանցման - ՓԿՈ](#) կամ [Միասնական գրանցման - Վերաբնակեցման](#) ընթացակարգերի միջոցով հայցը քննելու մասին որոշումը պետք է համաձայնեցվի գործերի վարման այդ եղանակների համար իրավասու մարմինների հետ: Որպես կանոն, [Ներառման կանխավարկածի](#) առկայության դեպքում գործերի քննությունը չպետք է ընթանա առանց Տարածաշրջանային բյուրոյում ՓԿՈ համար պատասխանատու նշանակված կենտրոնական կետի կողմից համապատասխան ՍԳԸ-ների հետ միասին համապատասխան ձևերի կամ ձևանմուշների վերանայման:

²⁸ Կամ գործը կգրկվի առաջնահերթությունից, եթե դա տեղին է գործառնական համատեքստում:

vi. Առաջին հայացքից ճանաչման (Prima Facie) մոտեցում

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ: Նախնական Prima Facie մոտեցումը նշանակում է, որ փախստականի կարգավիճակի ճանաչումը տեղի է ունենում ոչ թե անհատական գնահատման միջոցով, այլ ծագման երկրում առկա ակնհայտ, օրյեկտիվ հանգամանքների հիման վրա (կամ քաղաքացիություն չունեցող ապաստան հայցողների դեպքում՝ նրանց նախկին մշտական բնակության երկրում), որոնք ցույց են տալիս, որ այդ հանգամանքներից փախչող անձինք վտանգի վտանգի տակ են, որը նրանց դնում է փախստականների գործող սահմանման շրջանակում:²⁹ Որոշակի խմբի պատկանելու հիման վրա կիրառվող Նախնական ճանաչման Prima Facie մոտեցումը գործում է միայն փախստականի կարգավիճակը ճանաչելու դեպքում. մերժման մասին որոշում կայացնելու համար պահանջվում է անհատական ՓԿՈ գնահատում:

ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ: Առերևույթ Prima Facie մոտեցումը հատկապես տեղին է փախստականների լայնածավալ ժամանման իրավիճակներում, բայց կարող է նաև տեղին լինել նմանատիպ իրավիճակում գտնվող անձանց խմբերի համար, որոնց ժամանումը մեծամասշտաբ չէ, սակայն որոնք գտնվում են վնասի ենթարկվելու նույն ակնհայտ վտանգի մեջ:

Գործնականում, երբ Prima Facie քաղաքականություն է կիրառվում կամ հայտարարություն է արվում այն դիմումատուների խմբի նկատմամբ, որոնք պատկանում են Prima Facie հիմունքներով ճանաչման համար իրավասու անձանց խմբին, դիմումատուների կարգավիճակը ճանաչվում է նախապես գոյություն ունեցող հաշվառման տվյալների հիման վրա՝ խմբի վրա հիմնված ՓԿՈ մոտեցման շրջանակում, անհատապես Միասնական գրանցման – ՓԿՈ ընթացակարգով կամ բացառիկ դեպքերում՝ Պարզեցված ՓԿՈ-ից հետո՝ կախված հանգամանքներից:

Գործերի վարման համապատասխան եղանակի շրջանակում պետք է որոշվեն և, ըստ անհրաժեշտության, գրանցվեն³⁰, անհրաժեշտ լրացուցիչ մանրամասներ ինքնության, ծագման վայրի վերաբերյալ (կամ այլ ակնհայտ հատկանիշների վերաբերյալ, որոնց շնորհիվ անձի վրա տարածվում է Prima Facie մոտեցումը), ինչպես նաև Բացառման խթանները:

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ: Պետք է սահմանվեն ընթացակարգեր՝ նույնականացնելու այն անձանց, որոնց վրա կարող են տարածվել 1-ին հոդվածի Զ կետով սահմանված բացառման չափանիշները, կամ որոնց պահանջները առաջացնում են արժանահավատության հետ կապված խնդիրներ, և նրանք պետք է ուղղորդվեն դեպի Կանոնավոր ՓԿՈ ընթացակարգեր³¹: Կախված համատեքստից՝ դա կարող է հանգեցնել գործի առաջնահերթության վերացման և/կամ գործի պիտակավորման որպես ընթացքում գտնվող (in proGres)՝ ապագայում վերանայման նպատակով:

ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆ: Անկախ գործի վարման ընտրված մոտեցումից՝ առաջին հայացքից ճանաչման մոտեցումը պետք է իրականացվի միայն Տարածաշրջանային բյուրոյի, ՄՊԲ ՓԿՈ բաժինների և Պրոգրեսիվ կարիքների, ուժերի և լուծումների շրջանակի և Միասնական առաքելության ռեսուրսների հետ խորհրդակցելուց հետո: Գործի վարման ընտրված եղանակին

²⁹ ՄԱԿ ՓԳՀ, Միջազգային պաշտպանության մասին թիվ 11 ուղեցույց. Փախստականի կարգավիճակի՝ առաջին հայացքից ճանաչումը, 24 հունիսի 2015թ., HCR/ GIP/15/11, <http://www.refworld.org/docid/555c335a4.html>.

³⁰ Ի հավելումն իրականացվող գրանցման տեսակով պայմանավորված գրանցման նվազագույն տվյալների խմբի:

³¹ ՄԱԿ ՓԳՀ, ՄԱԿ փԳՀ ուղեցույց 1951 թվականի Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի 1Զ հոդվածի բացառման դրույթների կիրառումը գանգվածային հոսքի իրավիճակներում, 7 փետրվարի 2006 թ., <http://www.refworld.org/docid/43f48c0b4.html>. Այն իրավիճակներում, երբ ՄԱԿ ՓԳՀ-ն ընթացակարգեր է իրականացնում պետության անունից՝ առաջին հայացքից ճանաչման՝ prima facie հայտարարության համատեքստում, բացառման դրդապատճառները պետք է առնվազն նշվեն՝ թույլ տալով, ի թիվս այլոց, մանրագնին վերանայել, եթե գործը դիտարկվի վերաբնակեցման համար:

III. ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՉԻ

ԽՐԱԽՈՒՍՎՈՒՄ

i. Դասական ՓԿՈ

Դասական ՓԿՈ տերմինը վերաբերում է **Կանոնավոր ՓԿՈ-ին**: Դասական ՓԿՈ-ն չունի ստանդարտացված նշանակություն, ուստի այս տերմինի օգտագործումը չի խրախուսվում:

ii. Մասնատված ՓԿՈ – Վերաբնակեցում

Մասնատված ՓԿՈ – Վերբնակեցում տերմինը վերաբերում է **Միասնական ՓԿՈ.....- Վերաբնակեցմանը**: Հստակության և միանմանության նպատակով հարկավոր է օգտագործել **Միասնական ՓԿՈ – Վերաբնակեցում** տերմինը:

iii. Կենտրոնացված ՓԿՈ

Կենտրոնացված ՓԿՈ տերմինն օգտագործվում է՝ տարբերակելու **Կանոնավոր ՓԿՈ-ն** որոշակի գործառնության շրջանակում կիրառվող գործերի վարման այլ եղանակներից: Քանի որ այս տերմինը չունի ստանդարտացված նշանակություն, դրա օգտագործումը չի խրախուսվում:

iv. Լիարժեք ՓԿՈ

Լիարժեք ՓԿՈ տերմինը վերաբերում է **Կանոնավոր ՓԿՈ-ին**: Լիարժեք ՓԿՈ տերմինը չունի ստանդարտացված նշանակություն, ուստի դրա օգտագործումը չի խրախուսվում:

v. Ընդլայնված գրանցում

Անհատական ընդլայնված գրանցման նպատակն ավելի լայն է Միասնական գրանցում – ՓԿՈ-ինը, քանի որ այն չի ներառում ՓԿՈ որոշում: Քանի որ անհրաժեշտ է արտացոլել ՓԿՈ ընթացիկ

պրակտիկան, որտեղ գործընթացի գրանցման և ՓԿՈ փուլերը միաձուլված են, և կայացվում է ՓԿՈ որոշում, նման իրավիճակները նկարագրելու նպատակով այս Բառարանում ներկայացված է նոր տերմին՝ **Միասնական գրանցում – ՓԿՈ-ն**, և չի խրախուսվում Շնդլայնված գրանցում տերմինի օգտագործումը այն դեպքերում, երբ ՓԿՈ գրանցման գործընթացները հանգեցնում են ՓԿՈ որոշման կայացմանը Գրանցման շրջանակում:

Իրավասության բացակայության կանխավարկած / Հայցադիմումի առկայության բացակայություն

Այս տերմիններն օգտագործվել են որոշ գործառնությունների շրջանակում՝ վերաբերելու գործերի վարման այնպիսի մոտեցմանը, որը կիրառվել է ճանաչման շատ ցածր մակարդակ ունեցող գործերի խմբի կամ առանձին դեպքերի նկատմամբ, որոնք անընդունելի են ՓԿՈ ընթացակարգի համար կամ ամենայն հավանականությամբ **Բացահայտ անհիմն** են: Այս հասկացությունները ամրագրված նշանակություն չունեն ՄԱԿ ՓԳՀ մանդատի ներքո գտնվող ՓԿՈ ընթացակարգերում, և դրանց օգտագործումը ամենևին չի խրախուսվում: **Բացահայտ անհիմն** և **ՔՓԿՈ-ով պայմանավորված ընդունելիության գնահատում** հասկացությունները կարող են օգտագործվել այն համատեքստերում, որտեղ ժամանակին օգտագործվում էին այս չխրախուսվող տերմինները:

